

ISSN 1829-1155

## Հիմնադիր

## ՀԱՅՈՒԹՎԻ ՀՐԱՄԱՆԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸՆՔՆԵՐԸ ԴՏՏԱԲԱՆ

## ԱՐՅԱՆՎԱՐԴՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Տաղաւորական  
Ասթիուդյու

Խմբագրության հասցեի  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռ.համ. 58-61-71

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

2(59)  
2011

# ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆ ԱՄՐԻՈՒ

\* ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
Գ. ՊԵՏՐՈՎՅԱՆ ..... 4

### II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (903-917)

\* ՍԴՈ-903. ՔԱՂԱՔԱՑԻՒՆԵՐ ՈՒՐԵԲԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ, ՀՐԱՋԻԿ ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆԻ,  
ՀՐԱՋՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ  
«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ 56, 57 ԵՎ 58-ՐԴ ՀՈԴՎԱՅՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 18

\* ՍԴՈ-904. 1979 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԲՈՆՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՎԱՅՐԻ  
ԿԵՆԴԱԿՆԵՐԻ ՄԻԳՐԱՑՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՍՈՒԹՅԱՆ ՍԱԽԻՆ  
ԿՈՆՎԵՑԻԱՅՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 29

\* ՍԴՈ-905. 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ  
ՄԻԶԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՖՔՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՅԱՍԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 31

\* ՍԴՈ-906. «ԵԵԼՍԻՆԿԱՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԿԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԳՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»  
ՀԱՍՏԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱՅԻ  
ԱՌԱՋԻՆ ՍԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ՝ «ԽԱԽՏՎԵԼ» ԲԱՌԻՑ ՀԵՏՈ «ՆՐԱ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 34

\* ՍԴՈ-907. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻԶԱԳԱՅԻՆ  
ԲԱՆԿԻ ՄԻԶԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ԹԱՐԱՊԱՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 46

\* ՍԴՈ-908. 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ ՀՈՈՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈՈՐՏՈՒՄ ՀԱՍՏԳՈՐԾՎԿՈՒԹՅԱՆ  
ՄԱԽԻ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 49

\* ՍԴՈ-909. 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՕԿԱՅԻՆ ՏՐԱՆՊՈՐՏԻ  
ՄԱԽԻ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 52

|  |
|--|
| * ՍԴՈ-910. 2010 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՀԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ<br>ՄԱԼՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՑ ՀԵՏԲՆԴՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ<br>ՀԱՍՏԱՑՅԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ<br>ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 56  |
| * ՍԴՈ-911. 2003 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ ԿԻԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝<br>«ՄԱՐՏԻՎԱՍՏԱՆԱՑԻՆ ԿՈՆՏԵՐՍՈՒՄ ՇՐՋԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ<br>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՈՎԶՈՎԱՎԱՐԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ<br>ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ<br>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ<br>ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 59                                     |
| * ՍԴՈ-912. 2010 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ<br>ԷՆԵՐԳԱՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ<br>P4560-AM ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԽԱՎԱՐԻ ՀԱՍՏԱՑՅԱՆԱԳՐՈՒՄ<br>ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 63 |
| * ՍԴՈ-913. ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝<br>«ՍԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՆՎԱՃՐԱՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ»<br>ՀՀ ՕՐԵՆՆԵՐԻ 7-ՐԴ ՀՈՂՎԱՅԻՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ<br>ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 66  |
| * ՍԴՈ-914. ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՈՎԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ<br>228-ՐԴ ՀՈՂՎԱՅԻՌ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ ..... 80  |
| * ՍԴՈ-915. 1947 թՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝<br>ՍԱՄՍԱԳԻՏԱՅՎԱԾ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ<br>ԱՆՁԵՐՆՄԵԼԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ)<br>ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 88   |
| * ՍԴՈ- 916. ՔԱՂԱՔԱՅԻ ՍՎԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՄԱՆ ՀԻՄՄԱՆ ՎՐԱ՝<br>ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1217-ՐԴ ՀՈՂՎԱՅԻՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ<br>ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 93  |
| * ՍԴՈ- 917. 2010 թՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԿՈՒՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ<br>ՊԱՇՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՑՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ<br>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՔ<br>ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ ..... 97                                  |

### **III. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ**

|   |
|---|
| * ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ-15<br>Հոբեկանական օրենի խորհիւմ ..... 107 |
| * ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 110            |
| * ՄԻՀ ՀԻՄՆԱԳՐԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՍԴ-ՈՒՄ ..... 110               |
| * ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ ..... 111                               |

**Գարեգին ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀՀ ԱԺ պալգամավորի օգնական,  
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՄՐՅԱՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կայացման և իրավունքի գերակայության հաստատման ներկա փուլում երկրի առջև կանգնած հիմնական խնդիրների մեջ առաջնայինը սահմանադրականության հաստատումն է, մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, կազմակերպությունների և պետության օրինական շահերի պաշտպանությունը, իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերից անկախ, ինքնուրույն դատական համակարգի վերջնական ձևավորումն ու ամրապնդումը, Սահմանադրություն-օրենք-իրավակիրառական պրակտիկա եռամիասնության մեջ ներքին հակառակությունների ու տարաբնույթ ձևախեղումների հաղթահարումը<sup>1</sup> և, դրանց հավասարապես՝ այդ համակարգի ազատ և անկաշկանդ գործունեության դատավարական երաշխիքների ապահովումը: Դատական պաշտպանության, արդար դատաքննության (գործերի քննության արդարացիության) ապահովման կառուցակարգերի գործառման կարևորագույն երաշխիքը միջազգային (կոնվենցիոն) և սահմանադրական իրավունքները համարում են սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններին մասնակցող կողմերի մրցակցության (մրցողականության) և նրանց դատավարական իրավահավասարության սկզբունքը:

Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիրն իր բարոյա-քաղաքական ուժով բոլոր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի համար, փաստորեն, դարձել է միջազգային սովորութական (պարտադիր) իրա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, ՀՀ սահմանադրական դատարանի կազմավորման 15-ամյակի առիթով: Սահմանադրական դատարան: Տեղեկագիր, 2011, N 1, էջ 9:

վունք, իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության դատավարական երաշխիքները սահմանում է ամենաընդհանուր ձևով. «Յուրաքանչյուր ոք իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու իրապարակային դատաքննության իրավունք»: Այս հոչակագրի հիմքում դրված է «արդարությունը իրավունքի հիմքն է» կանխադրույթը:

Հայաստանի Հանրապետության համար 2002 թ. ապրիլի 26-ից ուժի մեջ մտած Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6 (արդար դատաքննության իրավունք), 7 (պատիճ՝ բացառապես օրենքի հիման վրա), 13-րդ (իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք), ինչպես նաև Կոնվենցիային կից թիվ 4 և 7-րդ արձանագրությունների 1-ին և 2-4-րդ հոդվածները, Էլ ավելի խորացնելով մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները, յուրաքանչյուր մարդու համար ճանաչում են օրենքով պաշտպանվելու, ազգային օրենսդրությամբ և եվրոպական իրավունքին համապատասխան արդարացի դատաքննության, խախտված իրավունքները դատական կարգով վերականգնելու իրավունքները:

ՍԱԿ-ի 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը ևս, Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի և Կոնվենցիայի նման, դատավարության մրցակցային սկզբունքն ուղղակիորեն չի սահմանում, բայց դրա 14-րդ հոդվածի 1-ին կետի տեքստից ևս բխում է, որ այն դատավարության մրցակցությունը համարում է արդար դատաքննության պարտադիր պայման: Այսուղեա նշվում է, որ «Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու իրապարակային քննության իրավունք»: Ակնհայտ է, որ միջազգային այս փաստարդում, արդարացի դատաքննության հետ միաժամանակ, առաջ է քաշված նաև մրցակցային դատավարությունից անբաժան, սակայն ինքնուրույն բովանդակություն ունեցող և ինքնուրույն գործառելու ընդունակ դատավարական մյուս սկզբունքը՝ դատարանի առջև կողմերի հավասարությունը, առանց որի դատավարության մասնակիցները չեն կարող ազատորեն մրցակցել:

2001թ. հունվարի 25-ին Հայաստանի Հանրապետությունը դարձավ

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Եվրոպայի խորհրդի անդամ ու ստանձնեց Կոնվենցիայում ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգին հավատարիմ մնալու և 1959թ. ստեղծված Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) իրավագորության (իրավունքի գերակայության) ճանաչման պարտավորություններ:

ՀՀ Սահմանադրությունը միջազգային պայմանագրերը, հետևաբար և՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ամրագրեց որպես ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս (6-րդ հոդվ.): Հետևաբար, ՀՀ Սահմանադրությունը միջազգային պայմանագրերն ու հանրաճանաչ սկզբունքները դիտարկում է որպես նաև սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական օրենսդրությունների բաղկացուցիչ մաս և դրանք արտացոլում է նշված դատավարական ընթացակարգերը կարգավորող օրենսդրության մեջ:

Միջազգային իրավական ակտերում մրցակցության սկզբունքը քննարկում է որպես արդար դատաքննության հիմնարար պայման, որպես գործի հանգամանքները պարզելու, ապացույցներ ձեռք բերելու, քննարկելու և հետազոտելու կառուցակարգ: Այն որպես դատավարության ինքնուրույն սկզբունք չի առանձնացվում, քանի որ արդար դատաքննության կարևորագույն պահանջներից մեկն այդ սկզբունքի իրականացումն է կողմերի հավասարության հիման վրա: Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ առանց օրենքի և դատարանի առջև կողմերի հավասարության, առանց դատական գործերը «ողջամիտ ժամկետում» քննելու պահանջի, առանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ հիշյալ Կոնվենցիայի դրույթները ներպետական օրենսդրության մեջ ներառելու (իմալեմենտացիայի), իրավունքի այդ ճյուղերում հնարավոր չէ առանձնացնել մրցակցության սկզբունքը և տալ դրա լիարժեք բնորոշումը<sup>2</sup>:

ՀՀ սահմանադրական դատարանը, ընդունելով, որ Գերմանիայի Դաշնությունում ձևավորված է սահմանադրական արդարադատության մայրամաքային իրավական համակարգի դասական նմուշօրինակ (մոդել), գերմանացի մասնագետների մասնակցությամբ վերջին չորս տարիների ընթացքում Երևանում իրավիրել է մոտ մեկ տասնյակ հասուլ սեմինարներ, որոնց արդյունքներով գործնական քայլեր են արվել սահմանադրական դատավարության ընթացակարգերի կատարելագործման ու դա-

<sup>2</sup> Տե՛ս Կյորոխտին Յ.Ա. Конституционное право и регулирование и реализация принципа состязательности судопроизводства в Российской Федерации: Автодореф. дисс. ... канд. юрид. наук. - М., 2007, էջեր 10-11; Комментарий к Конституции Российской Федерации. Под ред. В.Д. Зорькина, Л. В. Лазарева. - М. ЭКСМО, 2009, հոդվ. 123-ի մեկնարանությունը (էջեր 937-941); Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ: Ընդհ. խմբ. Գ. Հարությունյանի և Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, հոդվածներ 19-ի և 22-ի մեկնարանությունները (էջեր 227-233, 262-265):

տավարական վարչարարության բարելավման ուղղությամբ: ՀՀ Սահմանադրական դատարանի կազմավորման 15-ամյակի առիթով ներկայացված հոդվածում հեղինակի կողմից հատկապես ընդգծված են ՀՀ-ում ընտրական իրավունքի դատական պաշտպանության իրավական բացերը, սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության համակարգային (այդ թվում՝ դատավարության մրցակցային ձևի) հետագա կատարելագործման անհրաժեշտությունը<sup>3</sup>:

Մրցակցության սկզբունքի էությունը ճիշտ ընկալելու համար նախևառաջ անհրաժեշտ ենք համարում բացահայտել «մրցակցություն», «սկզբունք» և «մրցակցային դատավարություն» հասկացությունների իմաստները, հաշվի առնելով նաև պատմականության սկզբունքի պահանջները: Վերջինս մեզ սովորեցնում է, որ տարբեր ժողովուրդների կողմից կուտակված «դարերի իմաստնությունը» ոչ միայն օգնում է պարզել տվյալ երևույթի, այս դեպքում՝ մրցակցային դատավարության, ծագումնաբանությունը (գենեզիսը), այլև հստակորեն տեսնել հասարակության բնաշրջական (էվոլյուցիոն) և զապանակածն (վերընթաց) զարգացման վեկտորը, հաշվի առնել պատմության դասերը, խուսափել անցյալի սխալներից, այս դեպքում՝ գործող օրենսդրության իմաստից ելնելով ճիշտ սահմանել, ճիշտ կազմակերպել և ճիշտ կիրառել իրավունքների պաշտպանության՝ մինչև այժմ աշխարհում հայտնի լավագույն ձևը՝ մրցակցային դատավարությունը, որովհետև «միայն անցյալի վերլուծությամբ է, որ լավ ես հասկանում ներկան և հնարավորություն ես ստանում պատկերացնել ապագան»<sup>4</sup>:

Ըստ ակադեմիկոս Էդ. Աղայանի՝ «մրցակցություն» նշանակում է «մրցակից լինելը», «որևէ ասպարեզում իրար հետ մրցելը», իսկ «մրցակցային» նշանակում է «մրցության վրա հիմնված, մրցակցություն առաջ բերող, առավելագույն արդյունքի, դիրքի և այլնի հասնելու համար պայքար»<sup>5</sup>: Նույն բառարանում «վեճ»-ը բնորոշվում է որպես «բանավոր կամ գրավոր հակածառություն, որի ժամանակ յուրաքանչյուրը ձգուում է հաստատել իր կարծիքը՝ իր ճշտությունը»: Այն միաժամանակ «կրիվ», «պայքար», «մրցապայքար», «փոխադարձ հավակնություն է, հայց, որ լուծվում է դատարանով»<sup>6</sup>:

«Մրցակցություն» գոյականը ծագում է հենց «մրցել» բայից, որի իմաստը Վ. Դալ բնորոշում է որպես «վիճել», «պայքարել», «դատվել», «մրցակել»<sup>7</sup>: Ուստաց լեզվի բացատրական բառարանում «վեճ»-ը մեկ-

<sup>3</sup> Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, նույն տեղում, էջեր 10-12:

<sup>4</sup> Տե՛ս Բագդասար Բ.Վ. Принципы состязательности в уголовном процессе России и стандарт Европейского Союза. - М., Юрлутинфформ, 2008, էջ 29:

<sup>5</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 1036:

<sup>6</sup> Տե՛ս նույնը, էջ 1372:

<sup>7</sup> Տե՛ս Ճալ Բ. Տոլковый словарь живого великорусского языка. - М., Том 6, 1989-1991, էջ 254:

## ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նարանվում է որպես՝ 1. «ինչ-որ բանի քննարկման ժամանակ բանավոր մրցություն, որի մեջ կողմերից ամեն մեկը պնդում է իր կարծիքը, իր ճշնարտացիությունը», 2. «դատարանի կողմից լուծվող ինչ-որ բանի տիրապետելու փոխադարձ պահանջ»<sup>8</sup>:

Չպետք է մոռանալ նաև, որ դարերի խորքից եկող ժողովրդական իմաստնության համաձայն՝ «վեճը, մրցակցությունը հանգեցնում է ճշնարտության բացահայտմանը», որ «մրցակցությունը մրցունակության գրավականն է»: Հայցորի և պատասխանողի, մեղադրանքի և պաշտպանության կողմի առողջ և օրենքի վրա հիմնված հականարտությունը, այսինքն՝ մրցակցությունը, միշտ էլ կարող է նպաստել դատարանի կողմից որակյալ՝ օրինական և հիմնավորված որոշման կայացմանը:

«Սկզբունք»-ը լատիներեն «principium» բառի հայերեն թարգմանությունն է, որ նշանակում է «նախասկիզբ», «սկզբնական էություն», «հիմունք», «ելակետային դեկավար դրույթ»: Այդ բառի իրավական հասկացությունը ծագել է հռոմեական իրավունքում: Կոնֆուցիոսը դեռևս մ.թ.ա. 5-րդ դարում, Դանտեն, Ժ.Ժ. Ռուտեն և բազմաթիվ այլ փիլիսոփաներ ճշմարտացիության և արդարության սկզբունքը դրել են պետության կառավարման, այդ թվում՝ դատական մարմինների գործունեության հիմքում:

Գերմանացի փիլիսոփա, իրավաբան, բնախույզ Գ.Վ. Լեյբնիցը տարբերում էր բնության մեջ գործող սկզբունքներ, որոնք օբյեկտիվորեն հավաստում են պատճառականության օբյեկտիվ բնույթը (դետերմինացված են) և հոգևոր կարգի սկզբունքներ, որոնք ձևավորված են մարդկային գիտակցությամբ և կարող են լինել տեսական կամ փորձով հաստատված (էմպիրիկ), վերացրկված կամ կոնկրետ, ընդհանուր և հատուկ ու գոյություն ունեն որոշակի համակարգա-աստիճանային հաջորդականությամբ, փոխկախվածության և փոխկապվածության մեջ<sup>9</sup>:

Մարդկային իրավական միտքն իր երկարատև զարգացման պատմության ընթացքում արտացոլելով կյանքի պահանջնունքները, մշակել է նաև իրավական բազմաթիվ սկզբունքներ, զարգացման, պետության կառավարման օրինաչափություններ արտացոլող գաղափարական հիմունքներ, իրավական նորմերի հիմքում դրվող և պարտադիր բնույթ ունեցող իրավական գաղափարներ, ելակետային դրույթներ, որոնք ունեն կարգավորիչ (ռեգուլյատիվ) նշանակություն և իրենց գործառութային ընդգրկմանը համապատասխան բաժանվում են որոշակի խմբերի՝ միջազգային, կազմակերպական, պաշտպանա-պահպանական, իրավունքի այս կամ այն ճյուղում գործառող (ճյուղային) սկզբունքներ և այլն<sup>10</sup>: Իրավական սկզբունք-

<sup>8</sup> Տե՛ս Տոլковый словарь русского языка Под ред. Д. И. Ушакова. - М., Т. 4, 1940, էջ 446:

<sup>9</sup> Տե՛ս Լենինց Գ. В. Соч. в четырех томах. Т. 2, - М., 1984, էջ 97:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Т.Чернобель. Правовые принципы как идеологическая парадигма. Журнал российского права, 2010, թիվ 1, էջեր 84-94:

Աերը կոչված են օրենքը դարձնելու համոզիչ: Ըստ Պլատոնի՝ օրենքները կոչված են ոչ միայն պարզապես կառավարել, այլ նաև համոզել<sup>11</sup>:

Ժամանակակից իրավագիտության մեջ անվիճելիորեն ընդունված է, որ ընթացակարգային իրավունքի բոլոր ճյուղերում և դատավարության բոլոր փուլերում գործող սկզբունքներն օժտված են հետևյալ ընդհանուր հատկանիշներով՝ 1. դրանք իրավունքի տվյալ ճյուղի որակական առանձնահատկություններն են, այսինքն՝ իրավունքի համապատասխան ճյուղի Էռությունն արտացոլող հիմնական դրույթները, 2. դրանք արտացոլված են իրավունքի նորմերում, 3. դրանք բնորոշում են իրավունքի տվյալ ճյուղի միասնությունը<sup>12</sup>:

Հիմնվելով փիլիսոփայական այդ ընդհանուր դրույթների վրա և հաշվի առնելով իրավական (իրավունքի) սկզբունքների որոշ առանձնահատկություններ՝ կարելի է նշել, որ դատավարական սկզբունքները դատավարական իրավահարաբերությունների ձևավորման և գործառնության հիմքում ընկած դրույթներ են, որոնք պետք է՝ առաջին՝ ամբողջ դատավարության համար ունենան հիմնադրական նշանակություն, երկրորդ՝ արտացոլվեն իրավունքի նորմերում, երրորդ՝ լինեն ընդհանուր դատավարական և ամբողջությամբ վերաբերեն ընթացակարգի բոլոր տեսակներին (սահմանադրական, քաղաքացիական, քրեական, վարչական), չորրորդ՝ ունենան ինքնուրույն բովանդակություն: Այլ կերպ՝ մրցակցության սկզբունքը դատավարության կարգի միասնացման նախասկիզբ է, հիմունք, որին համապատասխան սահմանադրական, քաղաքացիական քրեական և վարչական գործերի քննության ժամանակ որոշվում է գործին մասնակցող անձանց (կողմերի) և դատարանի կարգավիճակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Համապատասխանաբար՝ «մրցակցության սկզբունքի բովանդակության հիմնական տարրեր են հանդիսանում՝ առաջին՝ կողմերի իրավունքները և պարտականությունները, երկրորդ՝ կողմերի իրավահավասարությունը, երրորդ՝ ապացուցման պարտականությունը, չորրորդ՝ դատարանի՝ որպես իշխանական լիազորություններով և պարտականություններով օժտված պետական մարմնի, մրցակցային դատավարությունում ունեցած դիրքը, հինգերորդ՝ մրցակցության սկզբունքի իրացման սահմանները»<sup>13</sup>:

Չնայած իրավաբանական գրականության մեջ գոյություն ունեցող այս դրույթների վերաբերյալ բոլոր դատավարագետների համաձայնությանը, այնուամենայնիվ, իրավական սկզբունքների, դրանց Էռության, տեսակային, սեռատեսակային, ստորակարգային (հիերարխիկ), գործառութային բնութագրումների պարզ գիտական սահմանումներ դեռևս չկան<sup>14</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Պլատոն. - Մ., Ըստ., Տ. III. Կ 2, էջ 196:

<sup>12</sup> Տե՛ս Գրաջանական պրոցես. Պոդ թեր. Բ.Վ. յարկովա. - Մ., Յալթա Կլյուեր, 2009, էջեր 28-30:

<sup>13</sup> Տե՛ս Կյորոխտին Յ.Ա., նշվ. սեղմագիր, էջ 17:

<sup>14</sup> Տե՛ս Չերնոբելյ Գ. Դ., նշվ. աշխա., էջ 86:

## ՎԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Եվ սա վերաբերում է ոչ միայն իրավական սկզբունքներին ընդհանրապես, այլ նաև մրցակցության, դրա՝ որպես իրավունքի հատկանիշի, ձևի, սկզբունքի, տարրի, լիարժեք բնութագրմանը:

Ընդհանուր տեսական մակարդակով վերլուծելով սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում հավասարապես գործառող մրցակցության՝ որպես միջնուղային սկզբունքի, հատկանիշները՝ դատավարագետ Ս.Ա. Մուկասեան մրցակցության սկզբունքը բնութագրում է որպես սկզբունք-կառուցակարգ, որպես համակարգաստեղծ մեթոդ, այն է՝ «Մրցակցությունն իրավունքի գլխավոր, համընդհանուր նորմատիվ դեկազար սկզբունք է (համապարտադիր պահանջ, հրամայական և այլն), որին համապատասխան՝ այս կամ այն իրավաբնական ընթացակարգի շրջանակներում գործերի դատական քննության ամբողջ գործունեությունը մարմնավորվում է հակադիր շահեր և դրանք պարագաներու համապատասխան իրավունքներ ու պարտականություններ ունեցող կողմերի վեճի ձևով, իսկ դատարանը, պահպանելով անկախություն և անաշառություն, վեճն ըստ էության լուծելու և գործով ճշմարտացի ու օրինական վճիռ կայացնելու նպատակով, դատավարության ընդհանուր դեկազարում է իրականացնում»<sup>15</sup>:

Ելնելով «սկզբունք» հասկացության այս ընդհանուր բնորոշումից, տեսականորեն վերացարկվելով իրավաբնական ընթացակարգային (պրոցեսուալ) մյուս ճյուղերում գործող մրցակցության սկզբունքի ձևակերպման առանձնահատկություններից՝ փորձենք անդրադառնալ այդ սկզբունքի գործառնությանը սահմանադրական արդարադատության (սահմանադրական մրցակցային դատավարության) մեջ:

Հայաստանի Հանրապետությունում մրցակցության սկզբունքի բովանդակությունը, ի տարրերություն մի շարք երկրների (ԱՄՆ, Իսպանիա, Ավստրիա, Բրազիլիա, Եգիպտոս, Պորտուգալիա, ՌԴ և այլն), սահմանադրական մակարդակով անմիջականորեն չի ամրագրվել: Ամրագրվելու դեպքում նման սահմանումը, իհարկե, կրաքարացներ դատավարությունների չորս ճյուղերում, այսինքն՝ բոլոր դատավարական ընթացակարգերում գործող (միջնուղային) այդ սկզբունքի իրավական ուժը: Այլ երկրների նման սահմանադրական մակարդակով չի սահմանվել նաև, որ արդարադատությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունների ընթացակարգերով (տե՛ս, օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 123-րդ հոդվ. 3-րդ մասը): Դատավարության այդ հատուկ ձևերից առանձնացվել է միայն սահմանադրական արդարադատությունը, նշելով, որ Հայաստանի Հանրապետությունում այն իրականացնում է սահմանադրական դատարանը (93-րդ հոդվ.): Այսի-

<sup>15</sup> Տե՛ս Մյուկասեևա Ը. Ա. Принципы состязательности в юрисдикционной практике. Авт moreф. дисс. ... канд. юрид. наук. – Ярославль, 2006, էջեր 7-15:

սով, արդարադատության իրականացման քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունների ծների հասկացության, նաև՝ դրանց անվանումների, բովանդակության, միջոցների և մերոդների, սուրյեկտների կազմի հիմնախնդիրների լուծումը բողնված է իրավունքի այդ ճյուղերի օրենսդրություններին և իրավակիրառական պրակտիկային, իսկ դրանց հետ առնչվող տեսական հարցերի բնութագրությունները՝ դատավարագիտությանը։ Կարծում ենք նաև, որ հիշյալ հարցերում սահմանադրական ուղղակի նորմերի բացակայությունը չի կարող բացասարար անդրադառնալ սահմանադրական դատարանի հիմնական նպատակի, այն է՝ Սահմանադրության պահպանման և դրա միատեսակ կիրառման ապահովման վրա։ Թեև ՀՀ Սահմանադրությունը մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքներն անմիջականորեն չի ձևակերպել, բայց քանի որ դրա 19-րդ հոդվածը «...հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» գործի քննության մեջ առաջնայինը համարում է մրցակցությունը և կողմերի հավասարությունը, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ ՀՀ Սահմանադրության մեջ հիշյալ սկզբունքը ձևակերպված է անուղղակի կերպով, այսինքն՝ այն առաջին հերթին սահմանադրական սկզբունք է, նոր միայն՝ ճյուղային։ Բոլոր դեպքերում սահմանադրական դատավարության շարժիք ուժը ևս, ինչպես որ դատավարական մյուս ընթացակարգերում է, կայանում է կողմերի միջև եղած վեճի մեջ, իսկ բովանդակությունը՝ սահմանադրական դատական վերահսկողության, այն է՝ լիազոր մարմինների և անձանց նախաձեռնությամբ իրականացվող նորմերի սահմանադրականությունն ստուգելու մեջ։

Կախված երկրում սահմանադրական վերահսկողության ընդունված մոդելից սահմանադրական արդարադատությունն իրականացվում է կամ ընդհանուր իրավասության դատարանների կողմից կոնկրետ գործերի քննության ընթացքում (ամերիկյան մոդել), կամ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների՝ սահմանադրական դատարանների կամ սահմանադրական խորհուրդների կողմից՝ հիմք ընդունելով սահմանադրական իրավունքի և սահմանադրական դատավարության իրավանորմերի համակարգը, իսկ սահմանադրական արդարադատության գործառույթի բովանդակությունը բացահայտվում է ոչ միայն այն իրականացնող պետական մարմնի լիազորությունների շրջանակով, այլ նաև գործունեության սկզբունքներով, այդ գործառույթների իրականացման ձևերով և եղանակներով։ Այս կերպ մոտենալով հարցին՝ կարող ենք նշել, որ մեր հանրապետությունում նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցում առկա է իրավական բացթողում։ Այն է՝ քաղաքացին սահմանադրական դատարան կարող է դիմել միայն իր նկատմամբ

## ՎԵՐԼՈՒԹՅԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ქერთული მარტინის მიხედვით, ეს უკავშირი განვითარებული იყო საქართველოს მთავრობის მიერ 1990 წლის 1 მარტის დღის მიზანზე. მაგრავ ეს უკავშირი მარტინის მიხედვით, ეს უკავშირი განვითარებული იყო საქართველოს მთავრობის მიერ 1990 წლის 1 მარტის დღის მიზანზე.

Ելնելով վերը նշվածներից՝ առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետից հանել «իր նկատմամբ» բառերը, որը հնարավորություն կտա մրցակցային դատավարության կանոններով դատարանում քննել նշված կատեգորիայի բոլոր (և ոչ միայն դիմողի նկատմամբ կիրառված) գործերը, անհատական և ընդհանուր (հանրային) շահագրգություն ունեցող բոլոր անձանց դիմումներով։ Հակառակ դեպքում բազմաթիվ ոչ իրավաչափ նորմատիվ ակտեր կարող են տևական ժամկետով մնալ օրինական ուժի մեջ և օրենսդրությունն այդպես էլ կմնա անկատար։

Ելելով միջազգային փորձից՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ 2006թ. հունիսի 1-ի օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) կողմերի իրավահավասարության հիման վրա սահմանադրական դատավարության իրականացումը հոչակեց որպես սահմանադրական դատարանի գործունեության հիմնարար սկզբունք (21-րդ հոդվ.): Եվ եթե ՄԻԵԴ-ը այդ սկզբունքի պահպանումը դիպուկ կերպով բնութագրում է որպես «արդարության բոլոր պահանջներից առաջնայինը», որպես երկու կողմերի «զենքերի հավասարություն»<sup>17</sup>, և այդ սկզբունքի խախտման պատճառով 2010թ. ապրիլի 1-ի դրությամբ նրա կայացրած 12631 վճիռներից 6112-ը վերաբերում են արդար դատաքննության իրավունքին, ապա ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում մրցակցության սկզբունքը բնութագրում է որպես «կողմերի հավասարությունն ապահովող մրցակցություն», որպես «կողմերի պատշաճ հնարավորություն՝ ներկայաց-

<sup>16</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 93-րդ հոդվ. մեկնաբանությունը: Ըստ համար Ա. Վաղարշյանի: «Իրավունք», 2010թ. գրքի 916, 920 էջերը: Տե՛ս նաև Գ. Գ. Հարությունյան, նշվ. տեղեկագրի 9-րդ էջը:

նելու իրենց գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրանց համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անքարենապաստ վիճակ», իսկ խախտման դեպքում՝ որպես «արդար դատաքննության իրավունքի, մրցակցության ու հավասարության չափանիշի խախտում» և նույն ժամանակահատվածում 15 գործով Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ օրենքների նորմերը՝ Սահմանադրության 19-րդ հոդվածին չհամապատասխանելու հիմքով<sup>18</sup>:

Եթե հաշվի առնենք, որ մրցակցության սկզբունքին (մրցակցային դատավարությանը) վերաբերող բոլոր հարցերը որոշ առանձնահատկություններով, բայց մանրակրկիտ կերպով կարգավորված են ոչ միայն սահմանադրական, այլև քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում ևս, ապա ակնհայտ է դատնում, որ դատավարության այդ ձևը դատավարական բոլոր ընթացակարգերում անվիճելիորեն դարձել է միջազգությային դատավարական սկզբունք. դատարանը, որ մինչև գործող օրենսդրության ընդունումը պրոպագանդվում էր որպես ոչ միայն գործը լուծող (վճռող), այլ նաև գործը լուծելու համար շրավարարող ապացույցները հայթայթող մարմին, ժամանակակից իրավաբանական ընթացակարգերում իսկապես ձեռք է բերել անկախություն, այսօր հիմնականում իրականացնում է գործի քննության և լուծման գործառույթ:

Նկատի ունենալով այն հանգանանքը, որ, ի տարբերություն քաղաքացիական և քրեական դատավարությունների, որոնցում մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքը խորապես ուսումնասիրված է 1870-ականներից մինչև մեր օրերը, բայց դրանցում դեռևս կան քազմաքիվ վիճելի հարցեր, սահմանադրկական դատավարության մեջ այդ սկզբունքը հետխորհրդային պետություններում, այդ քիում՝ Հայաստանում, սկսել է գործառել միայն անկախ պետությունների սահմանադրությունների ընդունումից հետո, ուստի անհրաժեշտություն է առաջանում հետազոտել դրա իրավական բնույթը և իրացման կառուցակարգը, իսկ ապա մշակել ՀՀ օրենսդրությունը կատարելագործելու առաջարկներ:

Քաղաքացիական, քրեական և վարչական դատավարություններում գործառող մրցակցության սկզբունքի էական տարբերությունը սահմանադրական դատավարության մրցակցությունից կայանում է նրանում, որ վերջինում իրար դեմ կանգնում են ոչ թե հակադիր նյութահրավական շահեր ունեցող անձինք (հայցվոր-պատասխանող, մեղադրող-մեղադրյալ), այլ Սահմանադրության պահպանման կամ երրորդ անձանց շահերի պաշտպանության մեջ ընդհանուր շահեր ունեցող կողմեր, որոնք, սակայն, այդ շահերի ըմբռնման հարցում ունեն տարբեր պատկերացումներ: Պա-

<sup>18</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հուլիսի 24-ի ՍԴՈ-710, 2010թ. հունվարի 14-ի ՍԴՈ-851 որոշումները: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 221-222 էջերը:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

տահական չէ, որ ՀՀ սահմանադրական դատարանում քննվող գործերի զգալի մասում որպես կողմեր հանդես են գալիս օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչները։ Դատավարական բնույթով այս վեճերն ունեն ոչ թե կողմերի սուբյեկտիվ իրավունքների ապացուցման, այլ իրավական վեճի կապակցությամբ նրանց դիրքորոշումն ապացուցելու բնույթ։

Ի տարբերություն դատավարական մյուս ընթացակարգերի՝ սահմանադրական դատարանում գործերի դատաքննությունը կարող է ընթանալ նաև գրավոր։ Բայց գրավոր վարույթը որպես ընդհանուր կանոն սահմանելը, որ մեծավ մասամբ գործադրում է ՀՀ սահմանադրական դատարանը, մեր կարձիքով, այնքան էլ արդարացված չէ, որովհետև այդ դեպքում կողմերը գրկում են դատաքննության ընթացքում առարկություններ անելու և իրենց ընդդիմախոսի փաստարկներին արձագանքելու հնարավորությունից։

Սահմանադրական դատարան դիմելու փուլում մրցակցության սկզբունքն արտահայտվում է նաև նրանում, որ դիմողից պահանջվում է ներկայացնել նրան վերաբերող գործում իր նկատմամբ վիճարկվող օրենքի կիրառումը կամ դրա կիրառման սպառնալիքը հաստատող փաստաթղթեր։ Դատարանի կողմից ընդունված գործի մասին ծանուցվում են կողմերը՝ դատավարությանը նախապատրաստվելու համար, բայց կողմն իրավունք չունի իրավական գնահատական տալ կամ մեկնարանել հակառակ կողմի պատասխանը։ Կողմերի իրավահավասարությունն այստեղ կայանում է միայն գործի ըստ էության լուծման հետ չկապված ընթացակարգային հարցերի լուծմանը մասնակցելու մեջ։ Մենք համաձայն ենք այն հեղինակների հետ, որոնց կարծիքով Օրենքում պետք է սահմանել հետևյալը. «Կողմերը չեն կարող հարց տալու միջոցով իրավական գնահատական տալ մյուս կողմի պատասխանին, չեն կարող մեկնարանել պատասխաները։ Կողմերը պարտավոր են լինել քաղաքավարի, հարգալից վերաբերվել միմյանց։ Կողմը կարող է հրաժարվել հարցին պատասխանելուց»<sup>19</sup>։ Սա, անշուշտ, կօժանդակի դատավարության (դատական նիստի) տևողության կրծատմանը և քննարկվող հարցերի շրջանակից դուրս չգալուն։

Անհրաժեշտ է նշել, որ Օրենքի 21-րդ հոդվածը, սահմանելով, որ «Սահմանադրական դատարանը պարտավոր է անաշառ կերպով ապահովել, որպեսզի կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն», այնուամենայնիվ, չի բացահայտում մրցակցության հատկանիշները և բովանդակությունը, վերջինիս տարբերը և կառուցվածքը, ըստ դատավարության զարգացման փուլերի դրա դրսնորումը, դատարա-

<sup>19</sup> Stéu *Kyproktosu ΙΟ.Α.*, նշվ. սեղմագիր, էջ 24:

նին որևէ դեր չի հատկացնում կողմերի մրցակցությունը դեկավարելու հարցում և այլն:

Օրենքի 21-րդ հոդվածում մրցակցության սկզբունքի բովանդակությունը, իհարկե, որոշ առանձնահատկություններով հանդերձ, արտաքնապես նման է դատավարության մյուս տեսակներում, հատկապես՝ քաղաքացիական դատավարությունում շատ առքատիկ կերպով (ընդամենը մեկ և կես տողով) ձևակերպված, բայց Քաղ. դատ. օր. հետագա հոդվածներում աստիճանաբար ընդարձակված դրա բովանդակությանը: Այստեղ բովանդակության մեջ ներառված է միայն արդար դատաքննության վերաբերյալ միջազգային իրավունքի պահանջը, դատարանի անշառության, գործի քննության ընթացքում կողմերին՝ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար և լիարժեք հնարավորություն տալու մասին պահանջը: Մինչդեռ, մրցակցության սկզբունքը ներառում էր դատավարության այնպիսի կառուցվածք, որի դեպքում միայն դատարանի կողմից իրականացվող գործի լուծման գործառույթը առանձնացվեր դատարանի առջև վիճող կողմերի գործառույթներից, որն այս քննորշման մեջ չի երևում: Բացի այդ՝ սահմանադրական դատավարությունում տարանջատված չեն մրցակցության սկզբունքի և կողմերի իրավահավասարության բովանդակության տարրերը: Ենթելով վերը նշվածներից՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ կամ մեկ այլ հոդվածում անհրաժեշտ էր նշել մրցակցության սկզբունքի բովանդակության հետևյալ տարրերը. ա) կողմերի, ինչպես նաև կողմերի ու դատարանի միջև դատավարական գործառույթների բաժանումը, բ) դատարանն իրականացնում է գործի քննությունը դեկավարելու և այն լուծելու գործառույթ, գ) կողմերը կատարում են դատարանի առջև վարույթ հարուցելու և իրենց շահերը պաշտպանելու գործառույթ, որն իրականացնելիս նրանք օժտված են դատավարական իրավահավասարությամբ<sup>20</sup>, դ) սահմանադրական դատարանը գործը քննում է միայն Օրենքի 25-րդ հոդվածում նշված մարմինների և անձանց համապատասխան դիմումի առկայության դեպքում (Օրենքի 26-րդ հոդված), այսինքն՝ սահմանադրական դատարանն իրավունք չունի իր նախաձեռնությամբ գործ հարուցել: Վերջին նորմը դատարանին պաշտպանում է երկրի քաղաքական կյանքին միջամտելու վտանգից: Նման վտանգի կանխմանն է ուղղված նաև Օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի նորմը, ըստ որի՝ սահմանադրական դատարանը որոշումներ և եզրակացություններ ընդունում է միայն դիմումով նշված առարկայի վերաբերյալ, այսինքն՝ նա իրավունք չունի դուրս գալ վեճի առարկայի սահմաններից:

<sup>20</sup> Տե՛ս *Мукасевева С.А.*, նշվ. սեղմագիր, էջ 22, *Хитрова О.В.* Принципы состязательности и равноправия сторон в процессуальных отраслях права. Труды Академии Управления МВД России, 2008, №2: *Ղազիլյան Գ.Ս.*, *Ղիլրանլյան Ռ.Ռ.*, Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները (Խմբ. Գ.Ս. Ղազիլյան) - Եր. համալս. հրատ., Երևան, 2003, էջեր 89-90:

## ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Մրցակցության սկզբունքի գործնական կիրառման առումով կարևորվում է նաև ապացուցման բեռլ սահմանադրական դատավարության կողմերի վրա բաշխելու հարցը: Այս տեսակետից ևս Օրենքն ունի որոշակի առանձնահատկություններ. որպես կանոն, ապացուցման բեռլ կրում են դիմողները (Օրենքի 76, 80-րդ հոդվածներ), սակայն որոշ դեպքերում հանրաքվեների, ՀՀ Նախագահի և ԱԺ պատգամավորների ընտրությունների հետ կապված գործերով) Օրենքը սահմանադրական դատարանին իրավունք է վերապահում ապացուցների ձեռքբերումը հանձնարարել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, այդ թվում՝ դատարաններին և դատախազության մարմիններին, անհրաժեշտության դեպքում՝ նաև իր աշխատակազմի աշխատակիցներին (Օրենքի 73 և 74-րդ հոդվածներ):

Դատավարական ընթացակարգերի բոլոր տեսակներում դատարանն օժտված է ձևական բնույթի նշանակալից, այդ թվում՝ լրացուցիչ լիազորություններով, որոնք ուղղված են մրցակցության և կողմերի ակտիվության ապահովմանը, բայց դատավարության քննարկվող տեսակում դատարանն օրենքով օժտվում է առավել մեծ ակտիվությամբ, որը և բնորոշում է սահմանադրական դատավարությունը որպես խաղը տեսակի մրցակցային դատավարություն: Այսեղ դատարանը գործի բոլոր հանգամանքները պարզում է ի պաշտոն («*ex officio*»)՝ չսահմանափակվելով սահմանադրական դատավարության մասնակիցների միջնորդություններով, առաջարկություններով, նրանց ներկայացրած ապացուցներով և գործում առկա այլ նյութերով (Օրենքի 19-րդ հոդվ.):

Սահմանադրական դատավարության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այստեղ որպես կողմեր երթեմն հանդես են գալիս պետական իշխանության մարմինները, օրինակ՝ Հանրապետության Նախագահը, մարդու իրավունքների պաշտպանը, ԱԺ պատգամավորների մեկ հիմքերորդը և այլն, և այս դեպքում նրանք պաշտպանում են պետության սահմանադրական իմունիտերը, իսկ երթեմն էլ որոշ ընթացակարգերում կարող է բացակայել վեճը, օրինակ՝ օրենքների սահմանադրականությունն ստուգելու գործերով, որոնցով նրանք հետապնդում են ոչ թե և ոչ միայն իրենց իրավական դիրքորոշումը պաշտպանելու նպատակ, այլ դատարանի առջև դնում են իրավական լուծման ենթակա հարց: Այսպիսի դեպքերում մինչև գործի դատաքննությունն սկսելը դիմումը փոխելը, մյուս կողմի դիրքորոշման հետ համաձայնվելը, դիմումը հետ վերցնելը դատարանի համար պարտադիր չէ, և նա կարող է շարունակել գործի քննությունը, եթե գտնում է, որ դիմումի առարկայի վերաբերյալ գործի քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից (Օրենքի 33-րդ հոդվ.): Այլ կերպ՝ դատավարության կողմերի մրցակցությանը, նրանց վեճին՝ որպես

վարույթի շարժից ուժին, փոխարինում է հանրային շահը, որը նույնպես վիճելի է, քանի որ պահանջում է օրենքի սահմանադրականության ստուգում:

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլում մրցակցության սկզբունքի իրականացումն ապահովում է զեկուցող դատավորի վրա որոշակի պարտականություններ դնելով, այն է՝ նա դատարանի նախագահի հետ որոշում է նիստին հրավիրվող անձանց շրջանակը, նիստից առնվազն 5 օր առաջ դատարանի անդամներին, կողմերին, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրյալներին է ուղարկում ձեռք թերված այլ փաստաթրբերի պատճենները, իսկ Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման և նրա թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհադրահարելի կամ վերացած ճանաչելու գործերով սահմանում է նյութերն ուղարկելու ավելի սեղմ ժամկետներ:

Սահմանադրական դատավարությունում կողմերն օգտվում են հետևյալ իրավունքներից. 1) նրանք կարող են ծանոթանալ գործի նյութերին, անել քաղվածքներ, 2) ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր, 3) գործի առնչությամբ ներկայացնել իրենց դիրքորոշումը, 4) հարցել տալ մյուս կողմին, նրա ներկայացուցիչին, փորձագետին, վկային, միջնորդություններ հարուցել, առաջարկություններ անել, 5) ծանոթանալ նիստի արձանագրությանը և ներկայացնել դիտողություններ (Օրենքի 47, 58-րդ հոդվածներ):

Օրենքում լուծված չեն կողմի՝ դատաքննությանը պարտադիր մասնակցելու կամ դատարանի կազմի կամ նրա որոշ անդամների դեմ քացարկներ հայտնելու հարցերը, որոնք, մեր կարծիքով, պետք է տեղ գտնեին դրա 47-րդ հոդվածում: Զե՞՞ո՞ որ ՄԻԵԴ-ը մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի պարտադիր տարր է համարում նաև մրցակցող կողմերի «լսվելու իրավունքը»: Բացի այդ՝ լրացման կարիք ունի նաև կողմերի բացատրությունները կարգավորող հոդվածը (51-րդ), որը, ըստ մեզ, պետք է ձևակերպում պարունակի կողմերի եզրափակիչ ելույթների հնարավորության, ինչպես նաև դրանցից հետո կողմերին հարցեր տալն արգելելու մասին: Բարելավման կարիք ունի նաև դատական նիստում կարգը խախտողների նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներին վերաբերող Օրենքի 50-րդ հոդվածը՝ այն դատավարության մյուս տեսակներում նախատեսված դատավարական սանկցիաներին համահունչ դարձնելու<sup>21</sup> և սահմանադրական դատարանում գործի քննության կարգուկանոն ապահովելու առումով:

<sup>21</sup> Տե՛ս Ռաֆիկ Պետրոսյան, Դատավարական սանկցիաներ, «Օրենք և իրականություն»: Միջազգային իրավաբանական գիտական հանդես: 2011, N3:

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ Ո-ՈՒԹԵՆ ԱՎԱԳՅԱՆԻ,**

**ՀՐԱԶԻԿ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ, ՀՐԱԶԱՎ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ,**

**ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝**

**«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 56, 57**

**ԵՎ 58-ՐԴ ՀՈԴՎԱՑՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**13 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (զեկուցող), Մ. Թոփոլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Դ. Թումասյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացիներ Ո-ութեն Ավագյանի, Հրաչիկ Հակոբջանյանի, Հրաչյա Ավետիսյանի, Արայիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56, 57 և 58-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիքը քաղաքացիներ Ո. Ավագյանի, Հ. Հակոբ-

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ջանյանի, Հ. Ավետիսյանի, Ա. Ավետիսյանի՝ 04.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով օրենքը եւ գործում առկա մյուս փաստաբերքը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թվականի սեպտեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001 թվականի հոկտեմբերի 27-ին եւ ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 6-ից:

Օրենքի վիճարկվող՝ «Ընկերության բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիա) եւ բաժանումը» վերտառությամբ 56-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված եւ հայտարարված բաժնետոմսերի քանակի եւ անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

Համախմբման (կոնսոլիդացման) հետեւանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում վերջիններս ենթակա են հետզննան Ընկերության կողմից դրանց՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքով:

2. Ընկերությունն իրավունք ունի ժողովի որոշմամբ բաժանել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի: Այդ դեպքում կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված եւ հայտարարված բաժնետոմսերի քանակի եւ անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ»:

Օրենքի 57 եւ 58-րդ հոդվածները սահմանում են բաժնետերերի պահանջով բաժնետոմսերի հետզննան եւ պահանջի իրավունքի իրականացման կարգը:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Դիմողները հանդիսանում են «Երեւանի Արարատ կոնյակի-գինուողու կոմբինատ» ԲԲԸ-ի բաժնետերերը: Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում 12.10.2008թ. ընդունված որոշումով համախմբել են ընկերության 8000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բակ անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը, հաստատվել է համախմբման, բաժնետոմսերի փոխարկման եւ հետզնման կարգը, ինչպես նաև հաստատվել են ընկերության կանոնադրության փոփոխությունները:

Դիմողներն ընկերության ընդհանուր ժողովի 12.10.2008թ. վերոհիշյալ որոշումը բողոքարկել են Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինիս 06.05.2009թ. վճռով նշված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցը մերժվել է: Նշված վճռը դիմողների կողմից բողոքարկվել է ՀՀ վերաբննիշ քաղաքացիական դատարան, որի՝ 02.09.2009թ. որոշմամբ վերաբննիշ բողոքը եւս մերժվել է: ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 04.11.2009թ. որոշմամբ դիմողների վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Ըստ դիմողների՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56, 57 եւ 58-րդ հոդվածները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածներին, 31-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

Դիմողների պնդմամբ՝ ընկերության բաժնետոմսերի համախմբման արդյունքում առաջացող կոտորակային բաժնետոմսերի՝ ընկերության կողմից պարտադիր հետզնման արդյունքում իրենք «...առանց դատական կարգի զրկվել են բաժնետոմսերի նկատմամբ իրենց սեփականության իրավունքից», մինչեւ ըստ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի՝ անձը սեփականությունից կարող է զրկվել միայն դատական կարգով: Դիմողները պնդում են, որ վիճարկվող հոդվածները «նախատեսում են այնպիսի ընթացակարգեր, որոնց կիրառմամբ բաժնետիրական ընկերությունում առավել մեծ մաս ունեցող բաժնետերերը ընկերության բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացման), բաժնետոմսերի փոխարկման եւ հետզնման միջոցով՝ իրենց հայեցողությամբ միակողմանի, առանց դատարան դիմելու, կարող են զրկել փոքր բաժնեմաս ունեցող բաժնետերերին իրենց բաժնետոմսերից»:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ առաջին հերթին մատնանշում է բաժնետոմսերի համախմբմամբ հետապնդվող նպատակները: Ըստ պատասխանողի՝ խնդրո առարկա գործընթացը համարվում է հսկիչ փաթեթների ձեւավորման մեխանիզմներից մեկը, ինչն իր հերթին իրականացվում է բաժնետիրական ընկերության կառավարման եւ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Բացի դրանից, ցածր անվանական արժեք ունեցող մեծ քանակությամբ բաժնետոմսերն զգալիորեն դժվարացնում են ռեեստրի վարման աշխատանքները:

Ըստ պատասխանողի, քանի որ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության ընթացքում բախվում են տարաբնույթ շահեր, «Բաժնետիրական ընկերությունների

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մասին» ՀՀ օրենքի հիմնական նպատակներից մեկը բախվող օրինական շահերի հավասարակշռությունն է: Օրենքի վերլուծության արդյունքում պատասխանող գտնում է, որ բաժնետոմսերի համախմբման մասին որոշումն ընդունվում է բոլոր բաժնետերերի մասնակցությամբ՝ ընդհանուր ժողովում, եւ միտքած է ընկերության՝ իր առջեւ դրված խնդիրների արդյունավետ իրազրդմանը: Վիճակվող իրավակարգավորումը սահմանելիս օրենսդիրն առաջնորդվել է անհատի եւ հասարակության շահերի հավասարակշռման սկզբունքով, մասնավորապես՝ տեղարաշխված բաժնետոմսերը համախմբելու հնարավորությունը դիտարկելով որպես առանձին դեպքերում արդյունավետ տնտեսական գործունեության իրականացումն ապահովող կենսական պայման, միաժամանակ նախատեսելով համախմբման հետեւանքով կոտորակային բաժնետոմսեր առաջանալու դեպքում դրանք հետ գնելու ընկերության պարտականությունը, բաժնետոմսերի սեփականատերերի նախապատվության իրավունքը, վերջիններիս կողմից բաժնետոմսերի հետզնման գնի որոշման հնարավորությունը:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ, նախ՝ **դիմումը որեւէ հիմնավորում չի բովանդակում «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57 եւ 58-րդ հոդվածներում ամրագրված որեւէ նորմի սահմանադրականության վերաբերյալ:** Երկրորդ՝ այդ հոդվածների նորմերը չեն կիրառվել եւ չեն կարող կիրառվել դիմունների նկատմամբ, քանի որ կանոնակարգում են կոտորակային բաժնետոմսերի հետզնման հետ կապված իրավահարաբերություններից էապես տարբերվող իրավահարաբերություններ՝ երբ բաժնետոմսերի հետզնման նախաձեռնությունը հենց հետզնվող բաժնետոմսերի սեփականատիրոջն է: Ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 60-րդ հոդվածների հիմքերով՝ գործի վարույթն այդ հոդվածների մասով ենթակա է կարճման:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 33.1-րդ հոդվածներին համապատասխան՝ տնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքում, ի թիվս այլոց, ընկած են տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության սահմանադրական սկզբունքները: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այն է՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Վերջինս հանդես է գալիս որպես տնտեսապարող սուբյեկտի ինքնուրույն, իր ոխակով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Զեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացվել օրենքով սահմանված՝ տարբեր կազմակերպահրավական ձեւերի շրջանակներում: Ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում բաժնետիրական ընկերության կազմակերպահրավական ձեւը խոչոր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու առավել բարդ, բայց արդյունավետ եղանակն է:

Բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև ընդհանուր կորպորատիվ շահերի պահովման խնդիր: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա:

Բաժնետիրական ընկերության ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, ի թիվս այլոց, ներառում է իր հայեցողությամբ բաժնետոմսեր բողարկելու եւ տեղաբաշխելու, այդ բաժնետոմսերի անվանական արժեքը որոշելու, իր կանոնադրական կապիտալը նվազեցնելու կամ ավելացնելու, բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու կամ մեծացնելու ազատությունը: Բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխությունը կարող է կատարվել ինչպես կանոնադրական կապիտալի ավելացմամբ, այնպես էլ առանց կանոնադրական կապիտալի չափի փոփոխության:

7. Բաժնետոմսերի համախմբումը երկու եւ ավելի բաժնետոմսերի փոխարկումն է ավելի մեծ անվանական արժեք ունեցող նույն տեսակի բաժնետոմսերի՝ առանց բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխության: Որպես կանոն, բաժնետոմսերի համախմբում իրականացվում է, ի թիվս այլոց, մանր բաժնետերերի բվաքանակի կրծատման, հավանական ներդրողին հնարավորինս փոքր քանակով արժեքորերի փաթեթ առաջարկելու նպատակով: Բաժնետոմսերի համախմբումը տնտեսապես արդարացված գործընթաց է, որը կազմում է բաժնետիրական ընկերության՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուրյեկտի, տնտեսական ազատության դրսեւորումներից մեկը:

Զեռնարկատիրական գործունեության ոլորտում ընդունված նշված գործընթացի օրյեկտիվ եւ անխուսափելի արդյունքն է կոտորակային բաժնետոմսերի առաջացումը: Սակայն նման բաժնետոմսերի առկայությունը նպատակահարմար չէ ինչպես արժեքորերի շուկայի կայունության ապահովման նկատառումներից ենելով, այնպես էլ բաժնետիրական ընկերության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Սիջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնակա-

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նում որպես կոտորակային բաժնետոմսերի գոյությունը բացառելու միջոց է ընդունված կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետզննան ինստիտուտը: Այդ ինստիտուտն ամրագրված է մի շաք եվրոպական պետությունների օրենսդրություններում (Լեհաստան, Չեխիայի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն եւ այլն): Փորձ է արվում՝ որպես կոտորակային բաժնետոմսերի գոյության վիճակը հաղթահարող միջոց կիրառել նաև կամավոր հետզննան ինստիտուտը, որը, սակայն, փակուղային վիճակ ստեղծելու վտանգ է պարունակում եւ լայն տարածում չունի:

Հաշվի առնելով, որ կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետզննան ինստիտուտը հանդիսանում է տնտեսապես արդարացված գործնքաց, ինչպես նաև նկատի ունենալով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային փորձը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բաժնետերերի մեծամասնության որոշմամբ կոտորակային բաժնետոմսերի օրենքով նախատեսված պարտադիր հետզննան ինստիտուտն ինքնին իրավաչափ է: Սակայն հիմնական խնդիրն այն է, թե տնտեսավարման նման ինստիտուտի առկայության պայմաններում ինչպես են երաշխավորվում ու պաշտպանվում փոքրամասնության իրավունքներն ու օրինական շահերը:

8. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 56-րդ հոդվածն ամրագրում է ընկերության՝ տեղաբաշխված բաժնետոմսերը համախմբելու իրավունքը, եւ նախատեսելով այդ գործնքացի արդյունքում կոտորակային բաժնետոմսերի առաջացման հնարավորությունը, որպես այդ բաժնետոմսերի առկայությունը բացառող միջոց՝ ամրագրում է դրանց պարտադիր հետզննան՝ միջազգային պրակտիկայում կիրառելի ինստիտուտը:

Կոտորակային բաժնետոմսերի հետզննան բովանդակությունը հանգում է նրան, որ այդ գործնքացում նարվում են բաժնետերերի մոտ առաջացած կոտորակային բաժնետոմսերը եւ բաժնետիրական ընկերության մոտ ծագում է այդ բաժնետոմսերի դիմաց համապատասխան փոխհատուցում վճարելու պարտականություն:

Հաշվի առնելով, որ դիմողներն ըստ էության վիճարկվող ինստիտուտը դիտարկում են որպես սեփականությունից զրկում՝ առանց սեփականությունից դատական կարգով զրկելու սահմանադրական պահանջի ապահովման, սահմանադրական դատարանը անհրաժեշտ է համարում վիճարկող նորմի սահմանադրականության հարցի որոշման նպատակով նախ բացահայտել «սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրահրավական բովանդակությունն ու հիմնական բաղադրատարերը եւ այդ համատերսում պարզել, թե արդյո՞ք բաժնետոմսերի համախմբման արդյունքում օբյեկտիվորեն ձեւավորվող կոտորակային բաժնետոմ-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սերի պարտադիր հետգնումը հավասարազոր եւ համարժեք է սեփականությունից զրկելուն:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է **սեփականության իրավունքի իրականացման** սահմանափակման միմյանցից տարանջատվող չորս հանգամանք:

ա) սեփականության իրավունքի իրականացման սահմանափակում՝ շրջակա միջավայրին վճառ պատճառելու, այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը խախտելու արգելով (31-րդ հոդվ. 1-ին մասի երկրորդ նախադասություն),

բ) սեփականազրկում (31-րդ հոդվ. 2-րդ մաս),

գ) սեփականության հարկադիր օտարում հասարակության եւ պետության կարիքների համար (31-րդ հոդվ. 3-րդ մաս),

դ) հողի սեփականության իրավունքի սահմանափակում՝ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ինչպես հետեւում է նշված ա) ենթակետի բովանդակությունից, սեփականության իրավունքի իրականացումը սահմանադիրը կաշկանդում է որոշակի հանրային արժեքներ պահպանելու պահանջով: Դրանք են. շրջակա միջավայրը, **այլ անձանց**, հանրության եւ պետության իրավունքները եւ օրինական շահերը: Նման մոտեցումը կոչված է ապահովելու սեփականատիրոջ եւ այլոց իրավունքների ու հանրային շահերի միջեւ ողջամիտ հավասարակշռություն՝ գրայք նկատմամբ անձի սեփականության իրավունքի իրականացումը ճանաչելով երաշխավորված, սակայն ոչ բացարձակ: Վերջինս առավել եւս վերաբերում է այն դեպքերին, երբ խոսքը ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեությամբ համախմբված անձանց մասին է: Դա, ինչպես շեշտել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, ոչ միայն իր բնույթով իրավունքի սահմանափակման առանձնահատուկ ինստիտուտ է, այլև անխուսափելիորեն նշանակում է, որ առկա է իրավաչափ նպատակի եւ սեփականության իրավունքի համադրման անհրաժեշտություն:

Միաժամանակ, Սահմանադրությամբ նախատեսված այդ նույն իրավաչափ նպատակի համար կոնկրետ օրյեկտի նկատմամբ **սեփականության իրավունքի սահմանափակում կարող է իրականացվել միայն անհրաժեշտ փոխհատուցման դեպքում**, որը կերաշխավորի սեփականության իրավունքի ապահովման շարունակականությունը: Իրավակարգավորման գլխավոր խնդիրը, ինչպես վկայում է նաեւ միջազգային փորձը, համարժեք փոխհատուցման ապահովումն ու այդ շարունակականության երաշխավորումն է:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը: Այդ դրույթում օգտագործված՝ «սեփականությունից զրկում» հասկացությունը սահմանադրաիրավական հարաբերությունների ոլորտում ունի ինքնավար բո-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

վանդակություն: «Սեփականությունից զրկում» հասկացության սահմանադրավական բովանդակությանը սահմանադրավական դատարանն անդրադարձել է նշված ՍԴՈ-630 որոշման մեջ, որում առանձնացնելով սեփականության իրավունքը սահմանափակելու՝ Սահմանադրությամբ թույլատրվող դեպքերը, սեփականությունից զրկումը բնութագրել է որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Հաշվի առնելով նաև այդ բնութագրումը՝ սահմանադրավական դատարանը գտնում է, որ սեփականությունից զրկելու ինստիտուտին բնորոշ են հետեւյալ հիմնական պարտադիր տարրերը.

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում սեփականատիրոջ կամքին եւ համաձայնությանը հակառակ տվյալ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի **անհատույց դադարեցում**,

- սեփականությունից զրկումը կիրառվում է որպես պատասխանատվության միջոց,

- սեփականությունից զրկելու դեպքում տեղի է ունենում տվյալ գույքի նկատմամբ սեփականատիրոջ ունեցած՝ տիրապետման, տնօրինման եւ օգտագործման իրավազորությունների միաժամանակյա եւ լիակատար դադարում՝ **առանց շարունակականության երաշխավորման**:

Հիմք ընդունելով «սեփականությունից զրկում» հասկացության վերոհիշյալ սահմանադրավական բովանդակությունը եւ հաշվի առնելով, որ կոտորակային բաժնետոմսերի պարտադիր հետզնման պարագայում դրանց սեփականատիրոջն օրենքով սահմանված կարգով վճարվում է բաժնետոմսի շուկայական արժեքը՝ սահմանադրավական դատարանը գտնում է, որ կոտորակային բաժնետոմսի հետզնմամբ սեփականությունից զրկում տեղի չի ունենում, եւ, հետեւարար, տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ **ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ սեփականության անձեռնմխելիության դատական երաշխիքը նույնաբռնվանդակ ձեւով կիրառելի չէ:**

9. Բաժնետիրական ընկերությունների բնույթն այնպիսին է, որ ընկերության գործունեության շրջանակներում բախվում են բաժնետերերի եւ ընկերության կառավարման մարմինների շահերը, բաժնետերերի տարբեր խմբերի շահերը: Վերջինս առավել ցայտուն դրսեւրվում է խոշոր եւ մանր բաժնետերերի հարաբերություններում: Խոշոր բաժնետերերը հանդիսանում են ընկերության ռազմավարական ներդրողները, որոնք հնարավորություն ունեն կանխորոշելու ընկերության որոշումները: Նրանց հիմնական շահը կայանում է նրանում, որ նրանք ձգտում են ընկերության գործունեությունից ձեռք բերել որոշակի արդյունքներ՝ անհրաժեշտ կառավարչական որոշումներ ընդունելու միջոցով: Մասն բաժնետերը ներդրող է, ով չունի ընկերության որոշումները կանխորոշելու, ընկերության գործունեության վրա ազդելու հնարավորություն: Մասն բաժնետիրոջ հիմնական շա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

իր կայանում է նրանում, որ ձգտում է հասնել բաժնետոմսերում իր ներդրած միջցների որոշակի շահութաբերության:

Իրավական պետության կողմից ազատ տնտեսական գործունեության կարգավորումը, ի թիվս այլոց, պետք է նպատակ հետապնդի ապահովելու արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության նաև նաև կիցների, տվյալ դեպքում՝ բաժնետիրական ընկերության խոշոր եւ մասն բաժնետերերի շահերի միջեւ: Այս նպատակն օրենսդրից պահանջում է նախատեսել պաշտպանության այնպիսի մեխանիզմ, որը կապահովի իրավական երաշխիքներ՝ բաժնետոմսերի համախմբման գործընթացում խոշոր բաժնետերերի կողմից կամայականության դրսեւրումների դեմ:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ այս առնչությամբ օրենսդրական կարգավորումը հիմնականում նպատակառուղղվել է ստեղծելու համապատասխան իրավական երաշխիքներ՝ ինչպես համախմբման որոշման կայացման գործընթացում, այնպես էլ վերջինիս նկատմամբ դատական վերահսկողության առումով:

Մասնավորապես, օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր ժողովը բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշումն ընդունում է միայն ընկերության խորհրդի ներկայացմամբ: Հարկ է նկատել, որ բացի նշված որոշումից, խորհրդի ներկայացմամբ կայացվում են սահմանափակ թվով այնպիսի կարեւոր որոշումներ, ինչպիսին է, օրինակ, ընկերության վերակազմակերպման մասին որոշումը:

Օրենքի 71-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է ընդհանուր ժողովի գումարման եւ օրակարգի մասին բաժնետերերին ծանուցելու կարգը՝ ըստ էռիքյան երաշխավորելով ժողովին բոլոր բաժնետերերի մասնակցության հնարավորությունը: Ընդ որում, ժողովի օրակարգը սահմանում է ընկերության խորհուրդը, եւ ժողովս իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդորևկած հարցերի վերաբերյալ:

Համաձայն օրենքի 77-րդ հոդվածի՝ ընդհանուր ժողովը կարող է բաժնետոմսերի համախմբման հարցը քննարկել, եթե ժողովին ներկա են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսից ավելիին համատեղ տիրապետող բաժնետերերը: Թեև բաժնետոմսերի համախմբման մասին որոշման կայացման համար ընդհանուր ժողովից պահանջում է միայն ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ծայների պարզ մեծամասնությունը, ինչը նշանակում է, որ բաժնետոմսերի համախմբման գործընթացը կարող է տեղի ունենալ ընկերության բաժնետերերի փոքրամասնության կամքով, այնուամենայնիվ, ընդհանուր ժողովի գումարման եւ օրակարգի մասին բաժնետերերին ծանուցելու օրենքով սահմանված կարգը պոտենցիալ հնարավորություն է ստեղծում բոլոր բաժնետերերի համար իրենց մասնակցությունն ունենալ բաժնետոմսերի համախմբման որոշման կայացման գործընթացին, այդ

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

գործընթացում ներկայացնել իրենց շահերը, արտահայտել իրենց կամքը:

Օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասով պահանջվում է ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացնել բոլոր բաժնետերերին օրենքով եւ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում։ Նույն հոդվածի 13-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր բաժնետիրոջ՝ ժողովի որոշումը դատական կարգով բողոքարկելու իրավունքը։

Օրենքի 59-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է հետզնվող բաժնետոմսի շուկայական արժեքի հաշվարկման գործընթացը, սահմանում է շուկայական արժեքի որոշման չափանիշները։ Ընդհանուր կանոնի համաձայն՝ շուկայական արժեքը որոշվում է ընկերության խորհրդի որոշմամբ։ Խորհուրդը կարող է այդ նպատակով օգտվել նաև անկախ գնահատողի ծառայություններից։

Վերոբարկյալ նորմերը հիմնականում բույլ են տալիս կոտորակային բաժնետոմսերի համախմբման գործընթացում հաշվի առնել կոտորակային բաժնետոմսեր ունեցող սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը՝ պատշաճ իրավաբանական ընթացակարգերի եւ որոշումների նկատմամբ դատական վերահսկողության կիրառմամբ։

10. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ «Ժողովի քվեարկություն» վերտառությամբ 77-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովն իրավասու է (քվրում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ ժողովի կողմից բաժնետոմսերի համախմբման վերաբերյալ որոշման կայացման համար պահանջվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է դառնում խնդրու առարկա որոշման կայացումն ընկերության բաժնետերերի գրեթե մեկ քառորդի կողմից։ Ավելին, հաշվի առնելով նաև, որ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժողովը չկայանալու դեպքում գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին, ապա գործնականում հնարավոր է դառնում խնդրու առարկա որոշման կայացումը նույնիսկ ընկերության բաժնետերերի 15%-ից

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քիչ ավելիի կողմից, որն էապես թուլացնում է նման որոշման լեզվիմությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման ընթացակարգը ոչ միայն չի ապահովում ընկերության բաժնետերերի սեփականության իրավունքին առնչվող որոշումների կայացումը ձայների այնպիսի հարաբերակցությամբ, որը հնարավորություն կտա ապահովել նման որոշումների լեզվիմության ավելի մեծ աստիճան, այլ նաև նման որոշման կայացումը բաժնետերերի փոքրամասնության կողմից ներդաշնակ չէ բաժնետոնմարտին համախմբման՝ որպես բաժնետերերի մեծամասնության շահերից բխող գործընթացի էությանն ու տրամարանությանը: Հաշվի առնելով բաժնետոնմարտի համախմբման գործընթացի էությունը, առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ և 77-րդ հոդվածներն ունեն բարեփոխման անհրաժեշտություն՝ այն առումով, որպեսզի հատկապես սեփականության իրավունքին առնչվող հարցերում ապահովվի որոշման կայացումը բաժնետերերի մեծամասնության կողմից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 57 եւ 58-րդ հոդվածների սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**13 հուլիսի 2010 թվականի  
ՍՊ-903**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**1979 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ԲՈՆՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՎԱՅՐԻ ԿԵՆԴՐԱԿԱՆԵՐԻ ՄԻԳՐԱՑՎՈՂ ՏԵՍԱԿՆԵՐԻ**

**ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՑՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ**

**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**20 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի: Գործով գեկուցող՝ Ռ. Պապյան.

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրսիրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1979 թվականի հունիսի 23-ին Բոննում ստորագրված՝ Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 06.07.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Կոնվենցիան ստորագրել է 1979թ. հունիսի 23-ին՝ Բոննում:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

2. Կոնվենցիայի նպատակն է պահպանել ցամաքային, ծովային եւ օդային վայրի կենդանիների միզրացվող տեսակները՝ իրենց տարածման ողջ շրջանում:

3. Կոնվենցիան բաղկացած է 20 հոդվածից եւ 2 հավելվածից:

4. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

· աջակցել, համագործակցել եւ օժանդակել միզրացվող տեսակներին վերաբերող հետազոտություններին,

· նախաձեռնել անքարենպաստ պահպանության կարգավիճակ ունեցող միզրացվող տեսակների պահպանության եւ կառավարման վերաբերյալ համաձայնագրերի կնքումը,

· միզրացվող տեսակների ոչնչացման վտանգից զերծ պահելու նպատակով վերականգնել եւ պահպանել նրանց բնակավայրերը,

· կանխել, վերացնել, փոխառուցել կամ նվազագույնի հասցնել այն գործողությունների բացասական ազդեցությունը, որը լրջորեն խոչընդոտում է տվյալ տեսակի միզրացիային,

· հնարավորության եւ անհրաժեշտության սահմաններում կանխել, նվազեցնել կամ վերահսկել այն գործոնները, որոնք վտանգում են կամ կարող են հետազայում վտանգել տվյալ տեսակի, ներառյալ էկզոտիկ տեսակների ներմուծման խիստ վերահսկումը:

Կոնվենցիայով նախատեսված գործառույթներն իրականացնելու համար պետք է ստեղծվի քարտուղարություն:

Կոնվենցիան սահմանում է կոնվենցիայում եւ հավելվածներում կատարվող փոփոխությունների, վեճերի կարգավորման, կոնվենցիային միանալու կամ չեղյալ հայտարարելու, ինչպես նաև ուժի մեջ մտնելու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 1979 թվականի հունիսի 23-ին Բոննում ստորագրված՝ Վայրի կենդանիների միզրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

20 հուլիսի 2010 թվականի  
ՍՊԸ-904



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**20 հուլիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի: Գործով գեկուցող՝ Ռ. Պապյան:

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի ապրիլի 27-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրասիական զարգացման բանկի միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական զարգացման բանկի գտնվելու պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 08.07.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրը կնքվել է 2010 թվականի ապրիլի 27-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական զարգացման բանկի գործունեության համար բարենպատ պայմանների ստեղծումը, ինչպես նաև նրա կարգավիճակի, անձեռնմխելիությունների, առավելությունների եւ արտոնությունների սահմանումը:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

· ՀՀ կառավարության կողմից տրամադրել կապի, Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կոյուղու, ջրահեռացման, թափոնների հավաքման եւ հակարդեհային անվտանգության ոլորտներում անհրաժեշտ ծառայություններ Բանկին եւ Ներկայացուցչությանը,

· Վերը նշված ծառայությունների դիմաց սահմանել նպաստավոր սակագներ՝ այն օրինաչափությամբ, ինչպես տրամադրվում է ՀՀ տարածքում գտնվող այլ միջազգային կազմակերպություններին կամ դիվանագիտական ներկայացուցչություններին,

· Բանկին, Ներկայացուցչությանը, նրանց եկամուտները, գույքը եւ այլ ակտիվները, ինչպես նաև Կանոնադրության համաձայն իրականացվող Բանկի գործողությունները եւ գործարքներն ազատել ցանկացած տեսակի հարկերից, տուրքերից, զանձումներից եւ այլ վճարումներից՝ բացառությամբ վերը նշված ծառայությունների դիմաց գանձվող վճարների,

· ազատել Բանկին եւ Ներկայացուցչությանն իրենց կողմից վճարվող աշխատավարձից եւ պարզեւատրումներից սոցիալական եւ կենսաթոշակային ապահովագրման համար ապահովագրական մուծումների վճարման պարտականությունից, ենթադրաբար բացառելով ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատակիցների ապահովագրական մուծումները,

· ՀՀ-ում գտնվելու ընթացքում Բանկի, Ներկայացուցչության պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին ազատել ներգաղթի հետ կապված սահմանափակումներից, արտասահմանցների գրանցման ընթացակարգից եւ գրանցման

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վճարումներից,

· ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ լիազոր ներկայացուցիչների եւ նրանց տեղակալների, Բանկի պաշտոնատար անձանց եւ աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների եւ մասնավոր տնային աշխատողների, Բանկի կողմից պաշտոնապես հրավիրված այլ անձանց ՀՀ տարածք մուտք գործելուն, ժամանելուն, բնակվելուն, մեկնելուն, ՀՀ-ում ազատ տեղաշարժվելուն աջակցելու նպատակով:

Համաձայնագրով սահմանված են նաև մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորման, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու, ուժի մեջ մտնելու եւ դադարեցման ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2010 թվականի ապրիլի 27-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրասիական զարգացման բանկի միջև Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական զարգացման բանկի գտնվելու պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**20 հունիսի 2010 թվականի  
ՍԴԱ-905**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԵԼԽՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԱՍՍՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՉՈՐԻ  
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ  
ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԻ՝ «ԽԱԽԱՏՎԵԼ» ԲԱՌԻՑ ՀԵՏՈ «ՆՐԱ»  
ԱՐՏԱՀԱՅԱՑՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**7 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թողյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (գելուցողի),

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Կ. Թումանյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «Խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝

## **«ՀԱՅՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիքը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 19.03.2010թ.ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթորթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետը սահմանում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անիրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքի ավագանին իր՝ 23.04.2009թ. թիվ 29 որոշմամբ որոշել է տալ համաձայնություն Վանաձորի համայնքի սեփականություն հանդիսացող Տարոն-3, ՔԸՀ-11 հասցեում գտնվող կիսակառույց ենթակայանը,

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

համաձայն հավելվածի, անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի էլեկտրական ցանցերին այն ավարտին հասցնելու, կահավորելու եւ նորաստեղծ քաղամասի անխափան էլեկտրամատակարումն ապահովելու նպատակով։ Նույն որոշմամբ Վանաձորի համայնքի ավագանին որոշել է առաջարկել Վանաձորի համայնքի դեկավարին կնքել համապատասխան նվիրատվության պայմանագիր։

Գտնելով, որ Վանաձորի համայնքի ավագանին իրավասու չեր կայացնելու նման որոշում, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը դիմել է դատարան՝ Վանաձորի համայնքի ավագանու 2009 թվականի ապրիլի 23-ի թիվ 29 որոշումն առողջին ճանաչելու պահանջով։

ՀՀ վարչական դատարանի՝ 30.06.2009 թվականի թիվ ՎԴ 6/0250/05/09 որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է։ Մերժելով հայցադիմումի ընդունումը՝ ՀՀ վարչական դատարանը հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասին, գտել է, որ «ներկայացված հայցադիմումը վեճի առարկա՝ Վանաձոր համայնքի ավագանու՝ 23.04.2009թ. թիվ 29 որոշումը որեւէ ձեռվ չի առնչվում Կազմակերպության իրավունքներին կամ պարտականություններին, հետեւաբար վերջինս, Օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգով պատշաճ հայցվոր չի հանդիսանում եւ Վարչական դատարանին նման հայց ներկայացնելու իրավունք չունի»։

ՀՀ վարչական դատարանի՝ 30.06.2009 թվականի թիվ ՎԴ 6/0250/05/09 որոշման դեմ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան։ ՀՀ վարչական դատարանի՝ 20.07.2009 թվականի թիվ ՎԴ 6-0250/05/09 որոշմամբ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի՝ 30.06.2009 թվականի թիվ ՎԴ 6/0250/05/09 որոշումը բողնվել է ուժի մեջ։ ՀՀ վարչական դատարանը մերժելով բողոքը՝ ըստ էության արտահայտել է այն նույն իրավական դիրքորոշումը, ինչն արտահայտված էր ՀՀ վարչական դատարանի 30.06.2009 թվականի թիվ ՎԴ 6/0250/05/09 որոշման մեջ։

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի՝ 20.07.2009 թվականի թիվ ՎԴ 6-0250/05/09 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը, իր՝ 23.09.2009 թվականի որոշմամբ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը վերադրձրել է։

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

3. Դիմողը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «Խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին։ Իր տեսակետը հիմնավորելու համար դիմողը ներկայացնում է հետեւյալ հիմնական փաստարկմերը։

- ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր խախտված իրավունքները» արտահայտությունը ենթադրում է դատարան դիմելու համար ավելի լայն հնարավորություն յուրաքանչյուր անձի համար, որի դրսեւորման օրինակ է հանդիսանում այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը դատարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց,

- ի տարբերություն քաղաքացիական գործեր քննող դատարանների, որտեղ գործում է դատավարության կողմերի մրցակցության սկզբունքը, վարչական դատարանը գործը քննում է ի պաշտոնե, ինչը ենթադրում է, որ վարչական դատարան դիմելու իրավունքը պետք է վերապահված լինի անձանց ավելի լայն շրջանակի՝ ապահովելու համար վարչական մարմնի գործողությունների նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը,

- «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վաճառորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կանոնադրության 2.1 կետի ուժով կազմակերպության նախականներից են մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը։ Իսկ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելը միջազգային փաստարդերով ընդունված լավագույն իրավական մեխանիզմներից է,

- տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված որոշումների վիճարկումը պետք է վերապահված լինի տվյալ համայնքի բնակիչներին եւ իրավաբանական անձանց՝ տվյալ համայնքում բնակվող բնակիչների շահերից ելնելով։

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածները երաշխափորում են անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը։ Որպես սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխիք՝ այն իրավական նախադրյալ է ստեղծում սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ եւ դատավարական կառուցակարգերի ստեղծման համար։ Այն, որպես դատական պաշտպանության մեխանիզմների ձեւավորման եւ գործունեության ան-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կյունաքար, երաշխավորում է իրական, խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանություն՝ յուրաքանչյուրին իրավունք վերապահելով դատարանում հայցելու իր եւ ոչ թե այլ անձանց, կամ իր համոզմամբ խախտված իրական, այլ ոչ թե «վերացական» իրավունքի պաշտպանություն:

Քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն առաջին հերթին հնարավորություն է ընձեռում հայց ներկայացնելու միայն այն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, որոնց իրավունքները եւ շահերը խախտվել են, եւ նման հնարավորություն չի ընձեռում յուրաքանչյուր անձի՝ հանրության շահերը պաշտպանելու համար, այսինքն՝ չի թույլատրում իրականացնել իրավաչափության լոկ օբյեկտիվ վերահսկողություն, ապա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայց ներկայացնելու համար պետք է առկա լինի ոչ միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ որոշում, գործողություն կամ անգործություն, այլ նաև անձանց իրավունքների խախտում:

Պատասխանողը, հղում կատարելով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վեճետիկի հանձնաժողով) դիրքորոշումներին, նշել է, որ վերջինս խնդրու առարկայի վերաբերյալ ունի հետեւյալ դիրքորոշումը. «Առաջնային է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունենա վիճարկելու որոշումն այն հիմքով, որ այն խախտում է իր իրավունքները: Սակայն, եթե որոշումն անմիջականորեն չի խախտել անձի իրավունքները, ապա վիճարկման հնարավորության ընձեռումը ներպետական օրենսդրության կարգավորման խնդիր է»:

5. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է համայնքի բնակչի կողմից համայնքին պատկանող սեփականության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարանի մատչելիության իրավունքի հարցերը: Այս առումով հարկ է օրենսգրքի վիճարկվող արտահայտության սահմանադրականության հարցը դիտարկել օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթների համատեքստում՝ դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, եթե որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»**

ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

Յուրաքանչյուր ոք ունի **իրավունքները** եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի **իր** իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված կիմքերով եւ կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցություն:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի **իր** խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմանը, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի իրապարակային քննության իրավունք»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի սահմանադրականության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության դրույթների մեկնարանությանը՝ ամրագրել է հետևյալը. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, եթե նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, եթե տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգուվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված դրույթների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 04.04.2008 թվականի ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներին, ինչպես նաև Մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամադրանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, **որոնց իրավունքները խախտվել են:** Այս առումով սահմանադրական դատարանն անհիմն է համարում դիմողի դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը նախատեսում է դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ավելի լայն շրջանակ:

6. Միենույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չեն բացառում այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությունը: Ընդ որում, ՀՀ օրենսդրությունը սահմանում է այդ հնարավորության դրսեւրման տարրեր ձեւեր: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի չորրորդ մասի 3-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով դատարանում պաշտպանում է մեղադրանքը: Տվյալ դեպքում վկայակոչված գործառույթի միջոցով դատախազը ոչ միայն հանդես է գալիս հանրային շահերի, այլ նաև հանցագործության հետեւանքով տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված նաև սահմանադրական արդարադատության բնագավառում, որտեղ, կոնկրետ վերահսկողությունից գատ, նախատեսված է նաև վերացական վերահսկողության ինստիտուտը, որի շրջանակներում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ, առավել եւս՝ առաջին մասի 8-րդ կետերում նշված սուբյեկտները, իրավական նորմերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելիս հանդես են գալիս ոչ միայն հանրային

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

շահերի, այլ նաև տվյալ իրավանորմի կիրառման արդյունքում տուժած անձանց շահերի պաշտպանության նկատառումներով: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական դատարան կարող է դիմել մարդու իրավունքների պաշտպանը՝ «Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով»: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության բնագավառում գործում է նաև կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նկատառումներով այլ սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը դատարան դիմելու իրավունք է վերապահում շահագրգիռ անձանց: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ շահագրգիռ անձանց ներք հանդես են զալիս նախ եւ առաջ այն անձինք, որոնց իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել: Միենալու ժամանակ, մի շարք դեպքերում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանել է նաև ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը՝ որպես շահագրգիռ անձի իրավունք: Մասնավորապես, վերջինս վերաբերում է օրինական ներկայացուցչին:

Վերը նշված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուրիշի փոխարեն դատարան դիմելու իրավունքը գործում է սահմանափակ դեպքերում, նախատեսված է այն իրավիճակների համար, երբ այն անձը, որի իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել, օբյեկտիվ պատճառներով չի կարող անմիջականորեն դիմել դատարան (օրինակ՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ լինելը), կամ **օրենսդիրը, հետապնդելով իրավաչափ նպատակ**, այլ անձի կամ անձանց, հանրության խախտված իրավունքների պաշտպանությունը կանոնակարգում է հանրային գործառույթի եւ հանրային շահերի համատեքսուում (օրինակ՝ հանցագործությունների կամ համայնքի սեփականության իրավունքի խախտման դեպքում): Բոլոր դեպքերում, ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Բացառիկ կանոն է ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքը, որի իրացման դեպքերի եւ կարգի սահմանումը բացառապես օրենսդիր մարմնի իրավասության հարց է:

## «ՍԱՀՄԱՆԱՊՐՈՎԻՍԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինն եւ, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածը շահագրգիռ հասարակական կազմակերպությունների առնչությամբ չի սահմանել ուրիշի խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը:

7. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, չսահմանափակելով դիմողի դիրքորոշումներով՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկել նաեւ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական եւ իրավական պետության, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ հասարակության կյանքում:

Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն եւ պետությունից անկախ հասարակական մեխանիզմների եւ հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարը հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են գրադեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դեռ ինքնանպատակ չեն, քանի որ, **նախ**՝ միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, **երկրորդ**՝ հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ**՝ հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն եւ վերահսկողություն սահմանել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարեւոր վում է այն պարագայում, եթե առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրա-

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները։ Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետությանը, այլև կրաքարացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարք հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը։ Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը**։ Այս դիրքորոշումը համահունչ է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որի համաձայն՝ կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր եւ իր անդամների իրավունքները եւ օրինական շահերն այլ կազմակերպություններում, **դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում**։

8. Վարչական դատավարությունում այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի («Actio popularis») առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ, որպես կանոն, եվրոպական երկրներում այս ինստիտուտն իր դասական իմաստով եւ լրիվ ծավալով կիրառում չունի։ Միաժամանակ, սահմանադրական դատարանը նման ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ մի շարք երկրներում վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգովածությունը»։ Վերջինս դատաիրավական պրակտիկայում ստացել է այնքան լայն մեկնաբանություն, որ հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող եւ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն է ընձեռվում **հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ նպատակների**

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

**ՉՐՉԱԲԱԿՈՒՄ Է:** Այսպիսի դիրքորոշում է ըստ էության արտահայտված նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում: Մասնավորապես, ՀՀ վճարեկ դատարանն իր՝ 30.10.2009թ. թիվ ՎԴ/3275/05/08 որոշմամբ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սույն գործով «Էկողար» բնապահպանական հասարակական կազմակերպությունն Օրիուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ» կազմակերպություն է, հետեւարար, օգտվում է այդ կազմակերպության կանոնադրական նպատակներից բխող, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հարցով դատական պաշտպանության իրավունքից»:

Հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կողեկտիվ իրավունքների եւ օրինական շահերի դատական պաշտպանության հարցերին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն: Ըստ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» (2004)20 հանձնարարականի՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները խրախուսում են քննության առնել այն հարցը, թե արդյո՞ք դատական վերահսկողության մատչելիությունը պետք է երաշխավորվի նաև այն միավորումների կամ այլ անձանց կամ մարմինների համար, որոնք իրավասու են պաշտպանել կողեկտիվ կամ համայնքային շահեր:

Բոլոր դեպքերում հիմնական մոտեցումն այն է, որ առանց իրավական շահի *actio popularis*-ը պետք է բացառվի:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**7 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴՈ-906**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁՆԱԳՐՈՒՄ  
(ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ճԱՆՍՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԳԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի և կառի նախարար Մ. Վարդանյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 21.08.2010թ.  
ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցող Ռ. Պապայանի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. հուլիսի 23-ին:
2. Համաձայնագրի նպատակն է՝ Սկզբնական ծրագրին առնչվող միջոցառումների համար (կենսական նշանակության ավտոճանապարհների ցանցի ընտրված հատվածների բարելավում եւ ավտոճանապարհների կառուցման ոլորտում ժամանակավոր աշխատատեղների ստեղծում) լրացնուցիչ ֆինանսավորում:
3. Համաձայնագրը բաղկացած է հինգ հոդվածից եւ անբաժանելի մաս կազմող երեք առդիրից եւ հավելվածից, որոնցով սահմանված են Ծրագրի նկարագրությունն ու իրականացման կարգը, մարման ժամանակացույցը եւ սահմանումները:
4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները:
  - վարկի մայր գումարը վերադարձնել մարման ժամանակացույցի համաձայն,
  - հայտարարել Ծրագրի նպատակների հանդեպ իր պարտավորվածության մասին, իրականացնել Ծրագրը տրանսպորտի եւ կապի նախարարության միջոցով՝ փոփոխված Իրականացման ծրագրի, Գործառնական ձեռնարկի դրույթների եւ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն,
  - պահպանել ԾԻԳ-ը (Ծրագրերի իրականացման գործակալություն) եւ ՀԱՃՏ-ն (Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն) մինչեւ Ծրագրի ավարտը՝ Բանկի պահանջները բավարարող աշխատակազմով, միջոցներով եւ տեխնիկական առաջադրանքներով,
  - ապահովել տարեկան բյուջեից համարժեք միջոցների տրամադրումը ճանապարհաշինական ոլորտին՝ միջավետական եւ հանրապետական ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար,
  - Ծրագրն իրականացնել Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն,
  - իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիթորինգն ու գնահատումը եւ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հաշվետվություններ,
  - վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման հա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

մակարգ, ինչպես նաև պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունինգ օր հետո Բանկ ներկայացնել միջանկյալ առողջական չենթարկված Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ:

Համաձայնագրով սահմանված է նաև այն գործողության մեջ դնելու եւ դադարեցնելու ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի հուլիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ վարկային համաձայնագրում (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴԱ-907**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 թվականի Ապրիլի 23-ին ՀՈՇՄՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՄԻԶԵՎ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուղյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի ապրիլի 23-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Խտայիայի Հանրապետության կառավարության միջեւ ոստիկանական ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 26.07.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցող Ո. Պապայանի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Ա. Օսիկյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն ստորագրել է 2010թ. ապրիլի 23-ին՝ Հռոմում:
2. Համաձայնագրի նպատակն է հանցավորության եւ ահարեկչության դեմ պայքարի բնագավառում ոստիկանության մարմինների միջեւ միջազգային համագործակցությունը:
3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- համագործակցել հանցավորության կանխարգելման, պայքարի եւ հետաքննության ոլորտներում,
- տեղեկություններ փոխանակել հանցավորության, հանցագործների, հանցավոր կազմակերպությունների, դրանց գործելաձեւերի, կառուցվածքի եւ կապերի, ինչպես նաև միմյանց համապատասխան տարածքներում գործող ահարեկչական խմբերի, դրանց գործունեության հետ կապված անձանց վերաբերյալ,
- տեղեկություններ փոխանակել ոստիկանության պաշտոնյաների ուսուցման եւ հանցավորության դեմ պայքարի հատուկ տեխնիկայի կիրառման, թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ դրանց բաղադրիների, մարդկանց թրաֆիկինգի եւ միջազգային ապօրինի տեղափոխման դեմ պայքարում կիրառվող մեթոդների, անձնագրերի եւ այլ ճամփորդական փաստաթղթերի, մուտքի արտոնագրերի, մուտքի եւ ելքի կնիքների վերաբերյալ,
- հատուկ հետախուզական միջոցառումները համակարգելու նպատակով ձեռնարկել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են վերահսկվող առաքումները, հսկողությունը եւ գաղտնի օպերատիվ գործողությունները,
- հայտնաբերել եւ հետ ընդունել մյուս պետության տարածքում ներգաղթի համապատասխան կանոնների խախտմամբ գտնվող իրենց քաղաքացիներին:

Համաձայնագրով սահմանված են նաև աջակցության դիմումների կազմման կարգը, դիմումները մերժելու կամ բավարարելու կարգն ու պայմանները, համաձայնագրի մեկնաբանությունից կամ իրագործումից ծագող վեճերի լուծման կարգը, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու, դադարեցնելու եւ փոփոխելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայա-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 2010 թվականի ապրիլի 23-ին Հռոմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Խորհրդական ժողովի կողմէ սահմանադրության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴՈ-908**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՆԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՎ ՉԵԽԻԱՎՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

**ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ**

**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մայիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Չեխիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2010 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավա-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մարտիրյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Զեխիայի Հանրապետության կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մայիսի 17-ին՝ Երևանում:

Համաձայնագրի նպատակը երկու պետությունների համապատասխան տարածքների միջեւ ու դրանցից դուրս օդային հաղորդակցությունները գարգացնելն է:

Պայմանավորվող կողմերն ստանձնել են հետեւյալ իրավունքները եւ պարտականությունները. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի նշանակելու ավիարենկերություն կամ ավիարենկերություններ՝ տվյալ Պայմանավորվող կողմից կողմից համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելու նպատակով, եւ հետ վերցնելու ցանկացած ավիարենկերության նշանակումը կամ փոխարինելու նախկինում նշանակված ավիարենկերությունը մեկ այլ ավիարենկերությամբ: Նման նշանակումը կատարվում է դիվանագիտական ուղիներով՝ գրավոր ծանուցմամբ: Կողմերը միմյանց տրամադրում են համաձայնագրում սահմանված իրավունքները՝ համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի համապատասխան բաժնում սահմանված երթուղիներով նշանակված ավիարենկերության կամ ավիարենկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցությունների հաստատման եւ շահագործման նպատակով:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նշանակած ավիարենկերությունը կամ ավիարենկերությունները սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելիս օգտվում են, ի թիվս այլնի, հետեւյալ իրավունքներից.

- մյուս Պայմանավորվող կողմի տարածքով անվայրէջք թոիչք կատարելու իրավունք,

- մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ոչ առեւտրային նպատակներով վայրէջքներ կատարելու իրավունք,

- մյուս Պայմանավորվող կողմի տարածքում՝ հավելվածում սահմանված կետերում առաջին Պայմանավորվող կողմի տարածքում գտնվող կետեր մեկնող կամ այդ կետերից ժամանող ուղեւորներ, ուղերեն եւ բեռ, ներառյալ՝ փոստ, առանձին կամ համակցված ձեւով, օդանավ վերցնելու եւ իջեցնելու իրավունք եւ այլն:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է.

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովել, որպեսզի ըստ համաձայնագրի նշանակման մասին ծանուցում ստացած ավիացիոն իշխանությունները, պահպանելով համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունների դրույթները, անհապաղ անհրաժեշտ շահագործման թույլտվություն տրամադրեն Չեխիայի Հանրապետության նշանակած ավիաընկերությանը,

- ապահովել, որպեսզի Չեխիայի Հանրապետության տարածք մուտք գործելիս, տարածքում գտնվելիս կամ տարածքից մեկնելիս օդանավերի շահագործմանը եւ օդագնացությանը վերաբերող՝ նրա տարածքում գործող օրենքները, կանոնակարգերը եւ ընթացակարգերը կատարվեն Հայաստանի Հանրապետության ավիաընկերությունների կողմից,

- իր մաքսային, միգրացիոն, համաձարակային եւ համանման կանոնակարգերը կիրարկելիս արտոնություն չտրամադրել համանման միջազգային օդային հաղորդակցությունների մեջ ներգրավված իր սեփական կամ ցանկացած այլ ավիաընկերության՝ մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության նկատմամբ,

- պաշտպանել, միջազգային իրավունքից բխող իր իրավունքներին եւ պարտավորություններին համապատասխան, անօրինական միջամտություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը,

- Չեխիայի Հանրապետության կողմից հարցման դեպքում ցուցաբերել անհրաժեշտ օգնություն քաղաքացիական օդանավի անօրինական զավթման գործողությունները եւ այլ անօրինական գործողությունները կանխելու համար՝ ուղղված նման օդանավերի, դրանց ուղեւորների եւ անձնակազմի, օդանավակայանների ու օդագնացության միջոցների բռիչքային անվտանգության եւ քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ուղղված որեւէ այլ սպառնալիքի դեմ,

- ապահովել, որ համարժեք միջոցներ ձեռնարկվեն իր տարածքում՝ օդանավը պաշտպանելու եւ ուղեւորների, նրանց ձեռքի իրերը զննելու եւ անձնակազմի, ուղերեսի, բեռի ու օդանավի պահուստային մասի համապատասխան ստուգումներն իրականացնելու համար,

- դրական լուծում գտնել նաեւ բոլոր այն հարցումներին, որոնք ներկայացվել են մյուս Պայմանավորվող կողմից եւ վերաբերում են անվտանգության հիմնավորված միջոցների կիրառմանը՝ որոշակի սպառնալիք կանխելու համար,

- ազատել մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանը ներմուծման սահմանափակումներից, մաքսատուքերից, անուղղակի հարկերից, տեսչական գանձումներից եւ այլ ազգային եւ տեղական տուրքերից եւ վճարումներից:

Համաձայնագրով հանգամանալից նախատեսված են նաեւ ավիաընկերության նշանակման եւ շահագործման թույլտվության, շահագործման

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թույլտվությունը չեղալ հայտարարելու եւ կասեցնելու պայմաններն ու կարգը, բոհջային պիտանիության սերտիֆիկատների եւ լիցենզիաների ճանաշման կարգը, բոհջային անվտանգության ապահովման կարգն ու պայմանները, մաքսային դրույթները, տուրքերը եւ հարկերը, օդանավակայանների եւ ավիացիոն միջոցների օգտագործման, ինչպես նաև տարանցման կարգն ու պայմանները եւ այլն:

Համաձայնագիրն ունի հավելված, որը կազմում է համաձայնագրի անբաժանելի մասը: Հավելվածում նախատեսված են Հայաստանի Հանրապետության եւ Չեխիայի Հանրապետության նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Պ Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մայիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Չեխիայի Հանրապետության կառավարության միջև օդային տրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴԱ-909**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԵԽԻԱՅԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՑ ԹՈՒՅԼԱՎՈՒԹՅԱՆ**

**ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՑ ՀԵՏԲՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆԱԳՐՈՒՄ**

**ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ**

**ՀԱՄԱՅՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մայիսի 17-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Զեխիայի Հանրապետության միջեւ առանց բոլոր պարագաների անձանց հետընդունման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 12.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցող Ռ. Պապայանի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացու-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

ցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջրացիոն ծառայության պետ Գ. Եղանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի մայիսի 17-ին՝ Երեսանում:

2. Համաձայնագրի նպատակն է առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունումը՝ ապահովելով միջազգային պայմանագրերով եւ ազգային օրենսդրությամբ երաշխավորվող իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- փոխանցել անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ են համաձայնագրի իրականացման համար, ինչպես նաև տրամադրել տեղեկություններ փոխանցած այդ տվյալների եւ դրանց միջոցով ձեռք բերած արդյունքների օգտագործման վերաբերյալ,
- տեղեկություններ տրամադրել իր օրենսդրությանը համապատասխան տվյալների ոչնչացման համար գործող ժամկետների մասին, ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն կանխելու համար տվյալների չարտոնված կամ պատահական օգտագործումը, դրանց կորուստը կամ չարտոնված կամ պատահական փոփոխումը կամ ոչնչացումը,
- համաձայնագրով նախատեսված դեպքերում կրել անձանց հետընդունուման հետ կապված ծախսերը, պատշաճ կերպով իրականացնել անձանց հետընդունումը եւ տարանցումը՝ միջազգային իրավունքի եւ սովորության ընթացակարգերի համաձայն:

Համաձայնագրով սահմանված են նաև այն ուժի մեջ մտնելու, կասեցնելու կարգն ու պայմանները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. 2010 թվականի մայիսի 17-ին Երեսանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Չեխիայի Հանրապետության միջեւ առանց

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-910**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-ԻՆ ԿԻԵՎՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ԱՆԴՐԱՋԱՄԱՆՅԱՆ ԿՈՆՏԵՔՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՅԱՅԻ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ  
ԱՐՁԱՎԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թողյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդված 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2003 թվականի մայիսի 21-ին Կիեվում ստորագրված՝ «Անդրսահմանային կոնտերաստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ուղղմավարական բնապահպանական գնահատման մասին» արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 17.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հան-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ քնա-  
պահպանության նախարար Ա. Հարությունյանի գրավոր բացարձությու-  
նը, հետազոտելով Արձանագրությունը և գործում առկա մյուս փաստա-  
թղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը  
**Պ Ա Ր Զ Ե Յ .**

ՊԱՐՀԵՑ.

1. Արձանագրությունն ստորագրվել է 2003թ. մայիսի 21-ին Կիեւում՝ երկրութ քնապահպանական հարցերի քննարկման եւ արդյունավետ լուծման, ինչպես նաև հարեւան երկրների հետ քնապահպանական խնդիրների համատեղ լուծման հստակեցված եւ իրավական հիմքերով համագործակցություն ծավալելու նպատակով:

2. Արձանագրությունը «Անդրսահմանային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային կից արձանագրություն է: Այդ կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 1996թ. մայիսի 14-ին՝ ՀՀ Ազգային ժողովի Ն-096-1 որոշմամբ:

3. Արձանագրության բաղկացուցիչ մաս են կազմում հիմք հավելված: Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:

- ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող եւ այլ համապատասխան միջոցներ՝ Արձանագրության դրույթները պարզ եւ թափանցիկ շրջանակներում իրագործելու համար,
  - ապահովել այն ընկերակցությունների, կազմակերպությունների կամ խմբերի ճանաչումն ու աջակցումը, որոնք նպաստում են Արձանագրության համատեքստում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության պահպանմանը,
  - ապահովել, որ իրենց բնապահպանական կողեկտիվ իրավունքներն իրականացնող անձինք իրենց գործունեության համար չպատժվեն, չիետապնդվեն կամ հարձակման չենթարկվեն,
  - ապահովել ռազմավարական բնապահպանական գնահատման իրագործումը,
  - որոշել, թե արդյոք Արձանագրությամբ սահմանված պլաններն ու ծրագրերն զգալի ազդեցություն կունենան շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա՝ ցանկացած դեպքում հաշվի առնելով Արձանագրության հավելվածում սահմանված չափորոշիչները,
  - սահմանել այն տեղեկությունների որոշման պայմանները, որոնք պետք է ընդգրկվեն շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ,

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ինչպես նաև ապահովել բնապահպանական եւ առողջապահական մարմինների հետ խորհրդակցությունների անցկացումը,

- ապահովել շրջակա միջավայրի մասին հաշվետվության մշակումը՝ ռազմավարական բնապահպանական գնահատում պահանջող պլանների եւ ծրագրերի համար,
- ապահովել հանրության պատշաճ, ժամանակին եւ արդյունավետ մասնակցությունը պլանների եւ ծրագրերի՝ ռազմավարական բնապահպանական գնահատմանը,
- ապահովել, որ պլանը կամ ծրագիրն ընդունելիս պատշաճ կերպով հաշվի առնվեն շրջակա միջավայրի մասին հաշվետվության եզրակացությունները եւ շրջակա միջավայրի մասին հաշվետվության մեջ նշված վնասակար ներգործությունները կանխարգելող, նվազեցնող կամ մեղմացնող միջոցառումները,
- իրականացնել պլանների կամ ծրագրերի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի՝ ներառյալ առողջության վրա զգալի ազդեցությունների մոնիթորինգ,
- իրականացված մոնիթորինգի արդյունքները տրամադրել բնապահպանական եւ առողջապահական մարմիններին եւ հանրությանը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4. Արձանագրությամբ սահմանված են նաև խորհրդակցությունների իրականացման, կողմերի քվեարկելու իրավունքի իրականացման, Արձանագրությունում փոփոխությունների կատարման, ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման եւ միացման, ուժի մեջ մտնելու, դրւության, ինչպես նաև վեճերի եւ առտեսադրության կարգավորման կարգն ու պայմանները:

5. ՀՀ սահմանադրական դատարանն ուսումնասիրելով նաև Արձանագրության տեքստի անգլերեն բնօրինակը՝ գտնում է, որ անհրաժեշտ է հայերեն պաշտոնական տեքստի հասկացության ապարատը համապատասխանեցնել անգլերեն բնօրինակին:

Ելնելով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2003 թվականի մայիսի 21-ին Կիեւում ստորագրված՝ «Անդրսահմա-

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նային կոնտեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի ռազմավարական բնապահպանական գնահատման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-911**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ**

**ԵՆԵՐԳԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈԽՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԵՐԳԵՏԻԿ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ P4560-ԱՄ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ՀԱՄԱՐ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՍՏԱՎՅԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**10 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուլյա-  
նի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ  
հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադ-  
րական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25,  
38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մա-  
յիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգա-  
յին զարգացման ընկերակցության միջեւ Էներգամատակարարման հու-  
սալիության եւ էներգետիկ արդյունավետության P4560-ԱՄ ծրագրի նա-  
խապատրաստման համար կանխավճարի համաձայնագրում ամրագր-  
ված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմա-  
նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»  
գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 17.08.2010թ.

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով առյօն գործով գեկուցող Ռ. Պապայանի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Կանխավճարի համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մայիսի 20-ին:
  2. Համաձայնագրի նպատակն է բարձրացնել էլեկտրական ցանցի կարողությունը եւ հուսալիությունը, ինչպես նաև կրատել պետական սոցիալական շինությունների կողմից էներգիայի սպառումը:
  3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները:
    - հայտարարել Գործողությունների նպատակների նկատմամբ իր պարտավորվածության նախն,
    - Գործողությունների իրականացմանը նպաստելու համար Իրականացնող մարմնի համար հասանելի դարձնել Կանխավճարի միջոցները,
    - իրականացնել Գործողությունների մոնիթորինգ եւ գնահատում, ապահովել ֆինանսական կառավարման համակարգի պահպանումը եւ Գործողությունների եռամսյակային առողջիւ չանցած միջնաժամկետ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը եւ ուղարկումը Համաշխարհային քանի՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից քառասունինգ օր հետո,
    - Գործողությունների համար պահանջվող եւ Կանխավճարի միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր ապրանքները եւ ծառայությունները ձեռք բերել սահմանված պահանջների համաձայն:

Համաձայնագրով սահմանված են նաև Կանխավճարի մասհանման կարգը եւ պայմանները, տոկոսագումարների վճարման կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2010 թվականի մայիսի 20-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Սիցազգային զարգացման ընկերակցության միջեւ Էներգամատակարարման հուսալիության եւ էներգետիկ արդյունավետության P4560-AM ծրագրի նախապատրաստման համար կանխավճարի համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-912**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝**

**«ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱՃՐՆԵՐ՝**

**ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄՎԱԲԻ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը**

**ՀԱՄԱՊԱՏՎԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ**

**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

**Քաղ. Երեւան**

**14 սեպտեմբերի 2010թ.**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳՐԻ 2(59)2011

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարույրունյանի (նախագահող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Ս. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Սարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխադրված մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 01.03.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ՀՀ Հանրային խորհրդի Առողջապահության եւ սոցիալական հարցերի համաձնաժողովի եզրակացությունը, հետազոտելով «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառության մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառության մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի ապրիլի 16-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի մայիսի 11-ին եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի նոյեմբերի 25-ից:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող 7-րդ հոդվածը 2009 թվականի ապրիլի 6-ի ՀՕ-66-Ն օրենքով փոփոխվել է եւ լրացվել թվով 6 մասերով: «Դիակային դոնորից օրգաններ եւ հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը» վերտառությամբ ներկայումս գործող այդ հոդվածը սահմանում է.

«Փոխառության նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, եթե տվյալ անձն իր կենդանության օրոք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների եւ հյուսվածքների դոնոր:

Օրգանների եւ հյուսվածքների դոնորների եւ ռեցիպիենտների ռեեստրում նրա՝ որպես դիակային դոնոր հանդես գալու որոշման բացակայության դեպքում փոխառության նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների) համաձայնությամբ հետևյալ առաջնահերթությամբ.

- ա) ամուսինը,
- բ) չափահաս երեխան,
- գ) ծնողներից մեկը,
- դ) հարազատ եղբայրը կամ քույրը,
- ե) հայրական կամ մայրական կողմից պապը կամ տատը:

Միեւնույն առաջնահերթությամբ մի քանի հարազատների առկայության դեպքում բավարար են նրանցից մեկի տեղեկացվածությունը եւ համաձայնությունը:

Յուրաքանչյուր ոք մահից հետո դոնոր հանդես գալու իր գրավոր անհամաձայնությունը լիազոր մարմնի հաստատած կարգով ներկայացնում է իր ընտանեկան բժշկին կամ տեղամասային թերապեւտին, որը գրանցվում է նրա բժշկական փաստաթղթերում:

Անձի դիակային դոնոր հանդես գալու որոշման վերաբերյալ տեղեկությունը ընտանեկան բժշկիը կամ տեղամասային թերապեւտը լիազոր

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մարմնի հաստատած կարգով փոխանցում է օրգանների ու հյուսվածքների դրույթում և ռեգիստրացիայում:

Փոխատվատման նպատակով մինչեւ 18 տարեկան երեխաների կամ օրենքով սահմանված կարգով անզործունակ ճանաչված անձի դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել միայն նրա ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ:

Լիազոր մարմնի սահմանած կարգով բնակչության շրջանում իրականացվում է տեղեկատվության տրամադրում օրգանների եւ հյուսվածքների փոխատվատման նշանակության, դրույթում նախապայմանների եւ փոխատվատմանն առնչվող այլ հարցերի շուրջ»:

Վերոհիշյալ օրենքի 3-րդ, 5-րդ եւ 10-րդ հոդվածների դրույթների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունն իր՝ 26.04.2007թ. թիվ 502-Ն, 26.04.2007թ. թիվ 551-Ն, 07.02.2008թ. թիվ 131-Ն եւ 07.02.2008թ. թիվ 132-Ն որոշումներով սահմանել է փոխատվատման ենթակա օրգանների եւ (կամ) հյուսվածքների ցանկը, դրանց ներմուծման կարգը, ինչպես նաև փոխատվատման, դրույթում օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության եւ անհրաժեշտության վերաբերյալ եզրակացություն տալու հետ կապված հարաբերությունների կարգավորման կարգը:

2. Դիմող կողմը գտնում է, որ մարդու արժանապատվության պաշտպանության կարեւոր նախադրյալներից է նրա իրավունքների ազատ եւ անարգել իրագործումը: Մարդու կամքի ազատ արտահայտումը՝ որպես նրա արժանապատվության իրավունքի անբաժանելի մաս, պետք է պաշտպանվի եւ հարգվի ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ նրա մահից հետո: Վերոնշյալը հավասարապես վերաբերում է նաև անձնական անձեռնմխելիության իրավունքին, որն անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում մարդու մահից հետո նրա մարմնի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի եւ մահացածի մարմնի իրավական պաշտպանության համար: Մարդն ինքն է որոշում եւ տնօրինում իր մարմնի ճակատագիրը, այդ թվում՝ որոշում վերջինիս ճակատագիրը մահից հետո: Մինչդեռ, ինչպես գտնում է դիմող կողմը, վիճարկվող նորմը ելնում է այն տրամարանությունից, համաձայն որի մարդու իր մահից հետո հանդիսանում է դիակային դուռը, եթե չհրաժարվի որպես այդպիսին հանդես գալուց, այսինքն՝ մարդու մահից հետո նրա մարմնի ճակատագիրն արդեն որոշված է:

Հստ դիմող կողմի՝ վիճարկվող նորմում նախատեսված են դիակային դրույթում օրգաններ եւ հյուսվածքներ վերցնելու հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման երկու իրարամերծ՝ «համաձայնության» եւ «անհամաձայնության» նախապայմանի սկզբունքներ, որի պարագայում «ակներեւ է իրավական անորոշությունը եւ խառնաշփորթը»՝ պայմաններ ստեղծելով իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմի «կամայական մեկնաբանման, կիրառման եւ չարաշահման համար»:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխադատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ հիմնավորումներով:

Օրգանների եւ (կամ) հյուսվածքների փոխադատվաստման համար անհրաժեշտ համաձայնությունը կամ բույլտվությունը կանոնակարգող՝ արտասահմանյան երկրների օրենսդրության, միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնել իրավակարգավորման երկու հիմնական մոդել: Պետությունների գերակշիռ մասը նախքան օրգանների փոխադատվաստումը պարտադիր է համարում դոնորի համաձայնությունը, սակայն տարբեր են համաձայնության արտահայտման եղանակները.

ա) ենթադրյալ համաձայնություն (անձի համաձայնությունն առկա է այնքան ժամանակ, քանի դեռ հստակ չի հրաժարվել իր մահից հետո իր օրգաններն օգտագործելուց),

բ) պողիտիվ համաձայնություն, երբ անձը կենդանության օրոք իր մահից հետո իր օրգաններն օգտագործելու հստակ համաձայնություն է տվել:

Ըստ պատասխանող կողմի եզրահանգման՝ մահացածի օրգանների եւ (կամ) հյուսվածքների փոխադատվաստումը մահացածի ենթադրյալ կամ նեզատիվ համաձայնության դեպքում եվրոպական եւ միջազգային չափանիշների տեսանկյունից չի դիտվում որպես նրա արժանապատվության եւ անձեռնմխելիության խախտում: «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխադատվաստելու մասին» ՀՀ օրենքը, ըստ պատասխանողի, հիմնված է ենթադրյալ համաձայնության համակարգի կամ, այլ կերպ ասած՝ «համաձայնության կանխավարկածի» վրա, եւ նման կարգավորումը երաշխավորում է նաև կենդանության ժամանակ անձի անծփանգությունը: Հետեւարար, այդ օրենքը համապատասխանում է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով առաջադրվող պահանջներին եւ սկզբունքներին, այնպես էլ իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ հստակ սահմանում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ եւ բավարար են դիակային դոնորի օրգանների եւ հյուսվածքների փոխադատման համար:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել.

ա) նախ՝ մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների եւ ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, պաշտպանության եւ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան դրանց օրենսդրական երաշխավորման ապահովման համատեքստում՝ այնքանով, որքանով առնչվում են վիճարկվող նորմով կարգավորվող հարաբերություններին,

բ) երկրորդ՝ բժշկական օգնության եւ սպասարկման՝ անձի սահմա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38-րդ հոդված) իրացման մատչելիության ապահովման տեսանկյունից, հաշվի առնելով նաև բնակչության առողջության պահպանման նպատակային ծրագրեր իրականացնելու եւ արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ապահովելու վերաբերյալ պետության սահմանադրական պարտականության (ՀՀ Սահմ. 48-րդ հոդված եւ 89-րդ հոդվածի 5-րդ կետ) երաշխավորված կատարումն ապահովելու անհրաժեշտությունը:

Մարդու եւ քաղաքացու իրավական կարգավիճակի կարեւորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրախրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու եւ քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրությունների կատարում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում եւ կամահայտնության դրսեւորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անհիշականորեն գործող իրավունք, որը ենթադրում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործունեություն միայն այդ իրավունքի եւ դրա անխախտելիության ապահովման շրջանակներում: ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվություն՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի իմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից: Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք (ՀՀ Սահմ. 15, 38-րդ հոդվածներ): Սահմանադրություն երաշխավորված է նաև մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ Սահմ. 16-րդ հոդված), որի իրավական բովանդակությունից է բխում անձի նկատմամբ անօրինական ամեն տեսակ ֆիզիկական եւ հոգեբանական ներգործության արգելքը՝ ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո՝ նրա դիակի նկատմամբ, այդ արգելքին համարժեք իրավական պաշտպանություն ապահովելու առումով, որպես նաև մարդու արժանապատվության իրավունքի առանձնահատուկ դրսեւորում: Այդ իրավունքն օրենքով ենթակա է երաշխավորված պաշտպանության նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական եւ այլ փորձերի:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքը սահմանելով փոխառատվաստման իրավական հիմքերը, դռնորի, ռեցիպիենտի (բուժական նախականերով փոխառատվաստման կարիք ունեցող ֆիզիկական անձի) եւ բժշկական հաստատությունների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, կոչված է նաև երաշխավորելու ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ 3, 14, 15, 16, 17 եւ 38-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորման սկզբունքների եւ մարդու իրավունքների ու ազատությունների անմիջական գործադրման անխախտելիությունը, որոնց սահմանադրախրավական բովանդակությունից ուղղակիորեն հետեւում է, որ հիշյալ օրենքի եւ վերջինիս սույն գործով վիճարկող հոդվածի իրավակարգավորման հիմքում պետք է դրվեն.

- մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման եւ պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը,

- անձի անձեռնմխելիության, ազատության եւ որպես վերջինիս դրսեւորում՝ ազատ կամաարտահայտության երաշխավորված պաշտպանությունը,

- անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների եւ ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակայությունը հասարակական շահի նկատմամբ,

- արդյունավետ, մատչելի, պետության սահմանադրախրավական պարտավորությունների շրջանակներում բժշկական սպասարկման, այդ թվում՝ մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու պայմանների ստեղծումը,

- փոխառատվաստման բնագավառում կոռուպցիոն հնարավոր դրսեւորումների բացառումը:

«Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) եւ վիճարկող նորմի համադրված վերլուծությունը վկայում է, որ սույն գործով քննության առարկա հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է հետեւյալ հիմնական սկզբունքներով ու միջոցներով.

- կենդանի դռնորից կամ դիակից փոխառատվաստում կարող է կատարվել դրա անհրաժեշտության մասին բժշկական եզրակացության հիման վրա, համապատասխան լիցենզավորված բժշկական հաստատություններում, եւ միայն այն դեպքում, եթե բժշկական այլ միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը եւ առողջության վերականգնումը (օրենքի 2, 4 եւ 5-րդ հոդվածներ),

- փոխառատվաստումն իրականացվում է ռեցիպիենտի կամ վերջինիս ծնողների կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ (18 տարին չլրանալու դեպքում), եւ նախազգուշացվում է սպասվելիք վիրահատական միջամտության հետ կապված հնարավոր բարդությունների մասին, առանց այդպիսի համաձայնության փոխառատվաստում կարող է

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

կատարվել այն դեպքում, եթե դրա հետաձգումն սպառնում է ռեցիպիենտի կյանքին եւ համաձայնության ստացումն անհնար է (օրենքի 6-րդ հոդված),

- փոխադրված նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ չեն կարող վերցվել այն դեպքում, եթե տվյալ անձն իր կենդանության օրոք, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հրաժարվել է մահից հետո հանդես գալ որպես օրգանների եւ հյուսվածքների դոնոր (օրենքի 7-րդ հոդվածի առաջին մաս),

- յուրաքանչյուր ոք մահից հետո դոնոր հանդես գալու իր գրավոր անհամաձայնությունը լիազոր մարմնի հաստատած կարգով ներկայացնում է իր ընտանեկան բժշկին կամ տեղամասային թերապետին, որը գրանցվում է նրա բժշկական փաստաթղթերում (օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մաս),

- դիակային դոնոր հանդես գալու որոշման բացակայության դեպքում փոխադրված նպատակով դիակից օրգաններ եւ հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների) համաձայնությամբ՝ սահմանված առաջնահերթությամբ (օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս),

- արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների առուվաճառքը եւ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանումը (օրենքի 2 եւ 10-րդ հոդվածներ):

Փոխադրված հետ կապված հարաբերությունների կարգավորման վերոհիշյալ սկզբունքների ու միջոցների իրավական բովանդակությունից հետեւում է, որ փոխադրված անձի կյանքի, բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման բացառիկ միջոց է: Այն կոչված է ոչ թե մարդուն ենթարկելու գիտական, բժշկական եւ այլ փորձերի, այլ վերականգնելու ռեցիպիենտի առողջությունը, փրկել կյանքը՝ նրա (կամ նրա օրինական ներկայացնելիքը) կամքի հիման վրա, միաժամանակ ապահովելով այդ անձի անձնությունը, ազատ կամաարտահայտության նրա իրավունքը: Հետեւարար, փոխադրված հարաբերությունները կարգավորող վերոնշյալ օրենքի նշված նորմերով սահմանված միջոցներն իրավակարգավորման նպատակի առումով համաշափ են եւ հետապնդում են սոցիալապես արդարացի, հետեւարար՝ սահմանադրախրավական նպատակ: Հիմնական խնդիրն այն է, թե ինչպիսի իրավական երաշխիքներ են ստեղծվում այդ սկզբունքային մոտեցումները կյանքի կոչելու համար:

Դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հարաբերությունները վիճարկվող նորմում կարգավորվում են օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ դոնորի՝ իր կենդանության օրոք արտահայտած կամահայտնության՝ գրավոր արտահայտած անհամաձայնության, սկզբունքով: Մասնավորապես, օրենքի վիճարկող 7-րդ հոդվածի առաջին մասում օրենսդիրն ամրագրել է, այսպես

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կոչված՝ «Ենթադրյալ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի անձի օրգաններն ու հյուսվածքները նրա մահից հետո կարող են վերցվել փոխապատճենային նպատակով, քանի դեռ կենդանության օրոք նա չի հայտնել իր անհամաձայնությունը։ Իսկ նույն հոդվածի երկրորդ մասում, որոշակի սահմանափակմամբ, ամրագրված է, այսպես կոչված՝ «պողիտիվ համաձայնության» սկզբունքը, համաձայն որի դիակի՝ որպես դոնոր հանդես գալը պայմանավորված է նրա հարազատների կամահայտնությամբ, եթե անձը կենդանության օրոք չի հստակեցրել մահից հետո դոնոր հանդես գալու իր որոշումը։

Այսպիսով, եթե մինչեւ օրենսդրական փոփոխությունը փոխապատճենային նպատակով դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ կարող էին վերցվել բացառապես նրա նախապես տված գրակոր համաձայնության պայմաններում, ապա օրենսդրական փոփոխություններից հետո նախատեսվում են երկու պայմաններ. դիակային դոնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ կարող են վերցվել՝

1) եթե անձն իր կենդանության օրոք գրավոր անհամաձայնություն չի հայտնել,

2) եւ եթե տվյալ անձի հարազատները (ազգականները) փոխապատճենային վերաբերյալ որոշման բացակայության պայմաններում այդ անձի մահից հետո համաձայնություն են հայտնել։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր կարգը մինչեւ օրենսդրական փոփոխությունը գործող կարգի համեմատությամբ ավելի ոլորտական է եւ հնարավոր բացասական դրսեւորումների կանխարգելման լրացուցիչ երաշխիքներ է պահանջում։ Այդ նպատակով է, որ օրենսդիրը, ի փոփոխումն օրենքի երկրորդ հոդվածի նախկին շարադրանքի, հստակ նորմ է սահմանել, որ «Արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների եւ հյուսվածքների առուվաճառքը»։

Սակայն խնդիրն այն է, թե արդյո՞ք միայն առկա փոփոխությունները բավարար են փոփոխված սկզբունքի հիման վրա օրենքի գործողությունը ՀՀ Սահմանադրության արժեքանական մոտեցումներին համապատասխան երաշխավորելու համար։

6. Սույն գործով վիճարկվող իրավանորմի սահմանադրականության հարցը լուծելիս սահմանադրական դատարանը կարեւորում է նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայում առկա սկզբունքային մոտեցումները։

Այսպես, ԵԽ Մարդու իրավունքների և բիոբժշկության վերաբերյալ կոնվենցիային կից Մարդու օրգանների և հյուսվածքների փոխապատճենային վերաբերյալ Լրացուցիչ արձանագրությունում առանձին կարգավորման են ենթարկված դիակային դոնորից փոփոխապատճենային նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հարաբերությունները (15-19-րդ հոդվածներ): Նշված դրույթների ուսումնասի-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բությունը վկայում է, որ դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններն և (կամ) հյուսվածքները վերցնելը կարող է տեղի ունենալ միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում:

1) Եթե առկա է համաձայնություն (լիազորում), բայց որի՝ «Մահացած անձի մարմնից օրգաններն ու հյուսվածքները չեն կարող հեռացվել, եթե օրենքով պահանջվող համաձայնությունն ու լիազորությունը չեն ստացվել: Օրգանների և հյուսվածքների հեռացումը չի կարող տեղի ունենալ, եթե մահացած անձն առարկել է դրա դեմ»: Եվ ինչպես նշված է վերոհիշյալ արձանագրության բացատրական գեկույցում՝ եթե անձն իր կենդանության օրոք հայտնել է իր ցանկությունը, իր համաձայնությունը փոխպատվաստման նպատակով իր օրգանը (հյուսվածքը) տալու կամ շտալու վերաբերյալ, ապա այդ կամքը պետք է հարգվի,

2) Եթե մահացած անձի համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ իր մահից հետո իր մարմնից փոխպատվաստման նպատակով օրգաններն և հյուսվածքները հեռացնելու վերաբերյալ պարզ չէ, ապա պետությունները պետք է հնարավոր դարձնեն ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի հիման վրա այդ հարցի լուծումը: Եթե մահացած անձի կամքը բավարար չափով հստակ չէ, ապա օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման համար պարտականություն կրողները պետք է փորձեն ստանալ մահացած անձի հարազատների համաձայնությունը: Եթե ազգային օրենսդրությունն այլ բան չի նախատեսում, ապա մահացած անձի հարազատների կողմից տրվող համաձայնությունը պետք է հիմնվի ոչ թե նրանց անձնական նախընտրության, այլ մահացած անձի արտահայտած կամ ենթադրյալ ցանկության վրա:

ԵՄ Պառլամենտի և Խորհրդի կողմից 2004թ. մարտի 31-ին ընդունված՝ Մարդու օրգանների և հյուսվածքների նվիրաբերման, տրամադրման, թեսրավորման, պահպանման և փոխպատվաստման իրականացման որակի և անվտանգության չափանիշների վերաբերյալ թիվ 2004/23/ԵՄ դեկավար որոշման 13-րդ հոդվածի համաձայն մարդու օրգանների և հյուսվածքների տրամադրումը պետք է բույլատրվի միայն այն բանից հետո, երբ բավարարվել են ԵՄ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջները համաձայնության և լիազորման վերաբերյալ: Եվ ինչպես նշված է այդ որոշման մեկնաբանություններում՝ մահացած անձի մարմնից օրգանները հեռացնելու հետ կապված հարաբերությունների կարգավորման բնագավառում առաջադրվում է երկու սկզբունքը.

1) «ակնհայտ համաձայնություն» («պողիտիվ համաձայնություն»), որի դեպքում անձը մահից առաջ հստակ արտահայտել է իր համաձայնությունը նման հեռացման վերաբերյալ, կամ մահացած անձի ընտանիքի համապատասխան անդամը համաձայնություն է հայտնել, եթե մահացած անձը չի հստակեցրել իր որոշումը,

2) «ենթադրյալ համաձայնություն», համաձայն որի ենթադրվում է, որ

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մահացած անձի մարմնից փոխառատվաստման նպատակով օրգաններ (հյուսվածքներ) կարող են հեռացվել, եթե տվյալ անձն իր կենդանության օրոք չի հայտնի իր առարկությունը կամ անհամաձայնությունը, կամ նրա հարազատները չեն հայտնի, որ անձն առարկել է իր մարմնից օրգաններ հեռացնելու դեմ:

Փոխառատվաստման նպատակով դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ օտարերկրյա պետությունների օրենսդրության ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ մահացած անձի մարմնից օրգաններ և (կամ) հյուսվածքներ հեռացնելու հետ կապված համաձայնության և լիազորման վերաբերյալ ընդհանուր առմամբ առկա են վերոհիշյալ նոտեցումները:

Իրավակարգավորման այդ սկզբունքներին համապատասխան է ձեւավորվել նաև օտարերկրյա դատական պրակտիկան, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում, Շվեյցարիայում, համաձայն որոնց.

- մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելը հանդիսանում է քաղաքացու կյանքը փրկելու եւ առողջությունը վերականգնելու միջոց եւ կարող է իրականացվել հումանիզմի այն սկզբունքներով, որ պիսիք հոչակված են միջազգային հանրության կողմից, պայմանավորված չեն գիտության եւ հանրության շահերով (ՌԴ սահմանադրական դատարանի 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 459-0 որոշումից),

- եթե մահացած անձը չի հստակեցրել իր ցանկությունն օրգանների եւ հյուսվածքների հեռացման դեմ, ապա նրա մերձավոր ազգականը կարող է առարկել նման գործընթացի դեմ, հետեւաբար՝ այդպիսի օրենքը ծառայում է հասարակության շահերին, խրախուսում է օրգանների նվիրաբերումը եւ կանխում ցանկացած չարաշահում, հաշվի առնելով այս բոլոր՝ օրենքը կարող է կիրավուել սահմանադրությանը համապատասխան ձեւով (Ռուսական դաշնային դատարանի 16.04.1997թ. IP.354/1996 գործով):

Միջազգային պրակտիկան ակնհայտ վկայում է, որ երկու նշված մոտեցումներն ել կյանքի իրավունք ունեն, խնդիրն այն է, թե ինչպես են դրանք իրացվում եւ օրենսդրութեն երաշխավորվում՝ տվյալ իրավահարաբերություններում հնարավոր բացասական դրսեւրումները կանխելու անհրաժեշտությունը նկատի ունենալով:

Հաշվի առնելով միջազգային առկա փորձը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքի ներկա իրավակարգավորման պայմաններում Հայաստանում նույնպես անձը երաշխավորված հնարավորություն ունի անարգել արտահայտել իր կամքը՝ կապված իր մահից հետո դիակային դոնոր հանդես գալու խնդրի վերաբերյալ, որով երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 3, 14, 16 եւ 17-րդ հոդվածներով նախատեսված նրա իրավունքների ու ազատությունների իրացվելիությունը, իսկ եթե այդպիսի որոշումը որեւէ պատճառով առկա (հստակ) չէ, ապա օրեն-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

քի վիճարկող նորմերն արգելում են դիակի օրգանների, հյուսվածքների փոխառատվաստում՝ առանց նրա հարազատների (ազգականների) համաձայնության, որը նույնպես հետապնդում է սոցիալապես արդարացի նպատակ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեր երկրում օրենքով նախատեսված առկա լուծումները եւ ենթաօրենսդրական իրավակարգավորումները, որպես մեկ միասնական համակարգ, թերի են ու ոչ լիարժեք:

7. Անդրադանալով վիճարկող նորմի եւ վերջինիս հետ համակարգային առումով փոխառատվացված այլ նորմերի իրավակարգավորման շրջանակներում բժշկական օգնության եւ սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38-րդ հոդված) իրացման ապահովման, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման ծրագրեր եւ արդյունավետ ու **մատչելի բժշկական սպասարկման պայմաններ** ապահովելու պետության պարտականության՝ որպես սահմանադրաիրավական նպատակի իրացվելիության խնդրին եւ գնահատելով այդ նորմերի կիրառման պրակտիկան՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են հետեւյալ հիմնախնդիրները.

ա) չի ձեւավորվել այդ հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի ամբողջական համակարգ (օրենքի եւ ենթաօրենսդրական ակտերի միջոցով), որը կերաշխավորի՝ առաջարկված նպատակի անթերի իրացումը եւ մարդու արժանապատվության եւ հիմնական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, կրացառի կոռուպցիոն ռիսկը,

բ) օրենքն ուժի մեջ է մտել առանց դրա գործողության անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների ապահովման,

գ) առողջապահական պետական նպատակային ծրագրերում մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ պատվաստելը չներառելու պարագայում շարունակում է առկա մնալ կոռուպցիոն մեծ ռիսկի գործոնը,

դ) դիակային դոնորներից փոխառատվաստման ենթակա օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու հստակ կանոնների բացակայությունը, այդ գործողությունների բափանցիկ ու վերահսկելի կազմակերպման կառուցակարգերի բացակայությունը հասարակական անվատահության ու արդարացված մտահոգությունների պատճառ են դառնում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ կառավարությունը չկատարելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի, «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի՝ «Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 541-Ն որոշման պահանջները, 2002 թվականի

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ապրիլի 16-ից մինչ օրս չի ընդունել քննության առարկա օրենքով իրեն պատվիրակված բոլոր որոշումները՝ օրենքի կիրարկումն ապահովելու համար։ Անցած ութ տարիների ընթացքում տվյալ օրենքի գործողության համար անհրաժեշտ եւ բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել, մասնավորապես, ՀՀ կառավարության կողմից դեռևս չեն սահմանվել։

- օրգանների եւ հյուսվածքների դրույների եւ ռեցիպիենտների ռենսուրի գործունեության, տեղեկությունների գրանցման եւ օգտագործման կարգը (օրենքի 2.1-րդ հոդված), այդ բայց՝ ՀՀ Վարչապետի 2009թ. մայիսի 18-ի թիվ 397-Ն որոշումից բխող,

- արհեստական եւ կենդանիներից վերցված օրգանների ու հյուսվածքների փոխառատվաստման կարգը, պայմանները եւ սահմանափակումները (**օրենքի 3-րդ հոդված**),

- փոխառատվաստման օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները, ինչպես նաև փոխառատվաստումն իրականացնելու կարգը (**օրենքի 4-րդ հոդված**),

- դիակից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելու թույլտվության կարգը եւ պայմանները։

Օրենքով հստակեցված չեն նաև փոխառատվաստման օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող, փոխառատվաստում թույլատրող եւ իրականացնող բժշկական հաստատությունների **լիցենզավորման իրավական սկզբունքները**, ինչպես նաև փոխառատվաստման՝ որպես բժշկական սպասարկման, **մատչելիության ապահովման տեսանկյունից** այդ գործընթացը ֆինանսավորելու (փոխառատվաստման դիմաց հատուցելու, պետական առողջապահական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորելու) հիմնական պայմանները, բացառությամբ այն դեպքերի, որոնք առնչվում են վիրահատության հետ կապված բարդություններին (օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետ),

«Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2009թ. մարտի 19-ին ընդունված օրենքով նախատեսվեցին լրացուցիչ իրավապայմաններ՝ արգելելու կենդանի կամ դիակային դրույթից վերցված օրգանների եւ հյուսվածքների առուվաճառքը, ապահովելու փոխառատվաստման ոլորտում տեղեկատվական միասնական համակարգի ու դրա օգտագործման սկզբունքների ներդրումը, սակայն դրան համապատասխան իրավական եւ կառուցակարգային համակարգեր չստեղծվեցին ապահովելու անհրաժեշտ եւ երաշխավորված վերահսկողություն փոխառատվաստման՝ որպես բժշկական սպասարկման ոլորտում պետության սահմանադրական խնդիրների կատարման ապահովման նկատմամբ, որոնց լուծումն օրենքի վերոհիշյալ փոփոխությունների ընդունման կապակցությամբ չի արտացոլվել նաև առողջապահական պետական նպատակային ծրագրերում։

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ-ում փոխադրաման պրակտիկայի ուսումնաբրությունը նաև վկայում է, որ այդ բնագավառի իրավակարգավորումը, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկը, անհրաժեշտ է համապատասխանեցնել բժշկական կոնկրետ հաստատություններում փոխադրաման իրական գիտատեխնոլոգիական հնարավորություններին՝ ապահովելով այդ բնագավառում բնակչության բժշկական երաշխավորված սպասարկման կազմակերպումն այն ընդհանուր սկզբունքներով, որպիսիք, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 38-րդ, 48-րդ (4-րդ կետ) հոդվածների դրույթների, ամրագրված են «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքում: Կառավարության հիշյալ որոշումը համահունչ չէ բնակչության առարկա օրենքի պահանջին: Այն դեպքում, եթե օրենքով արգելվում է Հայաստանից դրուրական օրգանների ու հյուսվածքների արտահանումը, կառավարությունն իր այդ որոշմամբ սահմանել է թվով տասնչորս օրգանների ցանկ, եթե դրանցից միայն երկուսի գծով է Հայաստանում փոխադրամասում իրականացվում: Այս առումով ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի թիվ 502-Ն որոշմամբ հաստատված ցանկն օրենքի իրավակարգորման սկզբունքներից չի բխում:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բնակչության առարկա օրենքի եւ դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման վերոհիշյալ պարտադիր պայմանների բացակայությամբ լիարժեք չեն կարող երաշխավորվել մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխադրամասում եւ դրա հետ կապված բժշկական օգնության ու սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի (ՀՀ Սահմ. 38-րդ հոդված) իրացման մատչելիությունը, հետեւաբար՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

Բացի դրանցից, նկատի ունենալով, որ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխադրամասում մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքն իրապարակումից հարյուր ութսուն օր հետո այն պաշտոնական ուժի մեջ մտնելու մասին դրույթը գործնականում որեւէ իրավական հետեւանք չի ունեցել եւ չի երաշխավորել օրենքի գործողության համար անհրաժեշտ իրավակարգավորում, ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, գտնում է, որ սույն օրենքը չի կարող կիրարկվել առանց դրանով իսկ նախատեսված ենթաօրենսդրական ակտերի ամբողջ փաթեթը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին ու սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան մշակելու, նախկինում ընդունած որոշումները վերանայելու եւ գործողության մեջ դնելու:

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն այն մասով, որով առնչվում է Հայաստանում շիրականացվող փոխառատվաստման հանգամանքներում դիակային դրնորից օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին եւ 14-րդ հոդվածին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխառատվաստելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ եւ 9-րդ հոդվածները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակնան պահից:

### **ՆԱԽԱԳԱՀՈՂ**

### **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-913**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 228-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ  
ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Քաղ. Երեւան**

**14 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուլյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչ Ա. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արիթը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 02.04.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

«ՍԱՀՄԱՆԱՎՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմոյ եւ պատասխանոյ կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի 75-րդ հոդվածով օրենսգրքի՝ «Վարույթը վճռաբեկ դատարանում» վերտառությամբ հինգերորդ բաժինը շարողութել է նոր խմբագրությամբ:

Օրենսգրքի՝ «Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը» վերտառությամբ 228-րդ հոդվածի երկրորդ մասը, որը գետեղված է օրենսգրքի հիմքերորդ բաժնում, սահմանում է. «Վճիռը բոլոր դեարերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործո թեսէլ է ոչ օրինական կազմով.

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որեւէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձեռնվ չի տեղեկացվել նիստի ժամանակի եւ վարուհ մասին.

3) Աճիշտ սպորտազեկ է ոչ այն ռատավոր, որը կալազեկ է այն.

4) վճռը սատրակուլ է ոչ այս դաստիպը, որը զայացրել է այս.

5) գործիք բազակայում է դատական նիստի արձանագրությունը»:

2. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է իրավակարգավորման բացի խնդիր: Մասնավորապես, դիմողի կարծիքով, օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ վճռի բեկանման հիմքերի շարքում նախատեսված չէ այն հիմքը, երբ դատարանը վճռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ: Վերը նշված փաստարկի հիման վրա դիմողը գտնում է, որ վճռի բեկանման հիմքերի շարքում վերոնշյալ հիմքը չնախատեսելը չի ապահովում գործին մասնակից չդարձած անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Ըստ այդմ էլ, դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին եւ 19-րդ հոդվածի 1-ին մասին:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վիճարկվող օրինադրույթն անհրաժեշտ է դիտարկել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-277 ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների եւ քաղաքացիական դատավարությունում վճռարեկությունը կարգավորող իրավանորմերի համատեքստում՝ հաշվի առնելով վճռարեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված գործառնական տեղը եւ դերը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 228-րդ հոդվածի 1-ին մասը բավարար իրավական հիմք են ստեղծում երաշխավորելու համար վճռարեկ դատարանի կողմից՝ գործին մասնակից չդարձած անձի իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ դատական ակտի դեմ վճռարեկ բողոքի ընդունումը եւ բողոքարկվող դատական ակտի բեկանումը: Դատական պրակտիկան եւս ընթանում է այս ճանապարհով:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վճռարեկ դատարանի՝ գործող սահմանադրական կարգավիճակի պայմաններում երաշխավորված է գործին մասնակից չդարձած անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների համատեքստում՝ հաշվի առնելով օրենսգրքի նախկին իրավակարգավորումը:

Մինչեւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքով օրենսգրքում կատարված փոփոխությունները վճռարեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը եւ ստորադաս դատարանի վճի բեկանման հիմքերը սահմանված էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 223 եւ 227-րդ հոդվածներով: 223-րդ հոդվածը սահմանելով վճռարեկ բողոք բերելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը՝ դրանում ներառել էր նաև գործին մասնակից չդարձած անձանց, որոնց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ վճի է կայացվել: 227-րդ հոդվածի համաձայն՝ վճռարեկ դատարան բողոքարկվող դատական ակտի պարտադիր բեկանման հիմք, ի թիվս այլնի, հանդիսանում էր գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ դատարանի կողմից վճռի կայացման փաստը:

Վերոհիշյալ դրույթների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մինչեւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավա-

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի ընդունումը գործող իրավակարգավորումը՝ գործին մասնակից չդարձած անձանց վերաբերյալ, ի թիվս այլնի, ամրագրել էր միմյանց հետ փոխկապակցված երկու դրույթ. դրույթներից մեկով վճռաբեկ բողոք բերելու իրավունք էր վերապահվում գործին մասնակից չդարձած անձանց, մյուս դրույթով նախատեսվում էր, որ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ:

«Հայատանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի հիման վրա կատարված փոփոխություններից հետո օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 223-րդ հոդվածը գործին մասնակից չդարձած անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակում չի ներառել: Նույն օրենքով փոփոխության ենթարկվեցին նաև վճռաբեկ բողոքի հիման վրա բողոքարկվող դատական ակտի պարտադիր բեկանման հիմքերը՝ չներառելով այն դեպքը, եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ:

Չնայած նրան, որ օրենսգրքի վերոհիշյալ 223-րդ հոդվածում գործին մասնակից չդարձած անձինք մատնանշված չեն որպես վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, այնուամենայնիվ, նշված անձանց վճռաբեկ բողոք բերելու իրավունքն ամրագրված է օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, որի համաձայն՝ գործին մասնակից չդարձած այն անձինք, որոնց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վճռաբեկ բողոք բերելու սկսած այն օրվանից՝ եթեր ամսվա ընթացքում, եթե իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին:

Օրենսգրքի 223, 228-րդ հոդվածների եւ 229-րդ հոդվածի 3-րդ կետի ուսումնափրությունից բխում է, որ գործին մասնակից չդարձած անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքն ամրագրված է ոչ թե օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 223-րդ հոդվածում, այլ «Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները» վերտառությամբ 229-րդ հոդվածի 3-րդ կետում, իսկ օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ վճիռի բեկանման հիմքերի շարքում նախատեսված չէ այն հիմքը, եթե դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ:

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. ապրիլի 20-ի աշխատակարգային որոշմամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա սույն գործը քննության է ընդունել՝ ելեկով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի կիրառման առնչությամբ ձեւավորված դատական պրակտիկայի վրա՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 28.11.2007թ. ՀՕ-277-Ն ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված վերոհիշյալ փոփոխությունների ազդեցությունն ուսումնասիրելու անհրաժեշտության նկատառումներից: Նման ուսումնասիրությունը խնդիր ունի պարզելու, թե արդյո՞ք վերոհիշյալ օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես, խնդրու առարկա հիմքը դատական ակտի պարտադիր թեկանման հիմքերի շարքից բացառելը հանգեցրել է այնպիսի իրավակիրառ պրակտիկայի ձեւավորմանը, որի պայմաններում խախտվում է գործին մասնակից չդարձած անձի դատական պաշտպանության իրավունքը, եւ արդյո՞ք օրենսդրական նշված փոփոխության արդյունքում առաջացել է օրենսդրական բաց, որն ստեղծում է անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման վտանգ կամ վերանում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը:

6. Գործը քննության նախապատրաստելու ընթացքում սահմանադրական դատարանի պահանջով Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ 29.07.2010թ. թիվ Դ-Դ-1-Ե-5271 գործությամբ սահմանադրական դատարան են ներկայացվել սույն գործով քննության առարկայի վերաբերյալ դատական պրակտիկան ամփոփող տեղեկատվություն եւ ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան դատական ակտերը:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2007թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-227-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ գործին մասնակից չդարձած անձանց կողմից ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքների քննության արդյունքում կայացված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ըստ էության որոշումների եւ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական փոփոխություններից հետո թեկուցել գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ վճիռ կայացնելն այլևս վճռի պարտադիր թեկանման նորմատիվ հիմք չէ, այնուամենայնիվ, դատական պրակտիկայի արդյունքները վկայում են այն մասին, որ բոլոր այն դեպքերում, երբ ՀՀ վճռաբեկ դատարանը պարզել է, որ բողոքարկվող վճիռը շոշափում

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Է վճռաբեկ բողոք ներկայացրած՝ գործին մասնակից չդարձած անձի իրավունքները կամ պարտականությունները, բեկանել է տվյալ վճիռը՝ դատարանի կողմից գործին մասնակից չդարձած անձանց իրավունքները կամ պարտականությունները շոշափող վճիռ կայացնելը դիտարկելով որպես **վճիռ պարտադիր բեկանման հիմք**: Ընդ որում, նման դիրքորոշման համար իրավական հիմք են հանդիսացել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը եւ Մարդու իրավունքների եւ իիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, որոնք **անմիջականորեն կիրառվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից**, եւ որոնց հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է արդար դատաքննության, կողմերի իրավահավասարության եւ մրցակցության դատավարական սկզբունքների խախտումը: Նման իրավակիրառական պրակտիկան վկայում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսգրքի՝ վճիռ բեկանման պարտադիր հիմքերի ցանկից գործին մասնակից չդարձած անձանց առնչվող դրույթը բացառելը չի խոչընդոտում գործին մասնակից չդարձած անձանց իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանությանը:

7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը եւ ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքսում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մեկնարանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոիիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, եթե օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ճեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ եթե առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը։ Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը։

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն սահմանադրական դատարանին։ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարծում է գործի վարույթը ... գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»։

Դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ դեպքում օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավակարգավորման ենթադրյալ բացի առկայությունը պայմանավորված չէ օրենքի նորմի անորոշությամբ, առկա է իրավակարգավորման հստակություն՝ մասնավորապես նկատի ունենալով նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի եւ Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները եւ Հայաստանում ճեւավորված իրավակիրառական պրակտիկան։ Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն օրենսդրության միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով քննության առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է միասնական եւ ստորադաս դատարանների կողմից պարտադիր կատարման ենթակա իրավական դիրքորոշում։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Ճ Ե Յ 3.**

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի երկրորդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**14 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴՈ-914**

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**1947 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ**

**ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԱՍ-ՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԳՈՐԾՎԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԵՐՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՅՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ**

**ՊԱՐՏՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

**ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երեւան**

**18 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոփյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1947 թվականի նոյեմբերի 21-ին Նյու Յորքում ստորագրված՝ Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված 2010 թվականի օգոստոսի 27-ին:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գոր-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծերի նախարարի տեղակալ Ա. Կիրակոսյանի բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՍԱԿ-ի Մասնագիտացված գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիան ստորագրվել է 1947 թվականի նոյեմբերի 21-ին՝ Նյու Յորքում: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1948 թվականի դեկտեմբերի 2-ին: 2010թ. օգոստոսի 10-ի դրությամբ կոնվենցիային անդանակցել է 118 պետություն:

Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիան ստորագրվել է Վերապահումով, ըստ որի՝ կոնվենցիայի VI հոդվածի 20-րդ բաժնի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:

2. Կոնվենցիան բաղկացած է 11 հոդվածներից՝ 49 բաժիններով եւ դրա անբաժանելի մաս կազմող 18 հավելվածներից: Յուրաքանչյուր հավելված վերաբերում է ՍԱԿ-ի մասնագիտացված գործակալություններից մեկին: «Դրանք են՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը, Զարգարացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Արժույթի միջազգային հիմնադրամը, Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Համաշխարհային փոստային միությունը, Հեռահաղորդակցության միջազգային միությունը, Փախստականների միջազգային կազմակերպությունը, Համաշխարհային օդերեւութաբանական կազմակերպությունը, Միջազգային ծովային կազմակերպությունը, Ֆինանսների միջազգային կազմակերպությունը, Զարգացման միջազգային ընկերակցությունը, Մտավոր սեփականության միջազգային կազմակերպությունը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը, ՍԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպությունը, Տորիզմի համաշխարհային կազմակերպությունը, ցանկացած այլ գործակալություն, որը Կանոնադրության 57 եւ 63-րդ հոդվածներին համապատասխան առնչվում է ՍԱԿ-ին:

3. Կոնվենցիայով սահմանվում է, որ ՍԱԿ-ի մասնագիտացված գործակալություններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, իրավասու են կնքելու պայմանագրեր, ձեռք բերելու եւ տնօրինելու շարժական ու անշարժ գույք, ներկայացնելու դատական հայցեր: Մասնագիտացված գործակալությունները, նրանց շինությունները, սեփականությունը եւ ակտիվները, արխիվներն ու փաստաթղթերն օգտվում են անձեռնմխելությունից, ներառյալ՝ դատական միջամտության ցանկացած տեսակից, ազատվում են բոլոր տեսակի ուղղակի հարկումներից կամ մաքսային

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տուրքերից, ներմուծման եւ արտահանման արգելքներից եւ սահմանափակումներից: Մասնագիտացված գործակալությունների աշխատակիցներն ու նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նույնալիքի արտոնություններից ու անձեռնմխելիություններից, որոնք տրամադրվում են դիվանագիտական առաքելությունների անդամներին: Մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաներն ու նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նույնալիքի արտոնություններից ու անձեռնմխելիություններից, որոնցից օգտվում են ՍԱԿ-ի պաշտոնյաները:

4. Հայաստանի Հանրապետությունն անդամակցելով կոնվենցիային՝ ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- մասնագիտացված գործակալությունների, նրանց շինությունների, սեփականության եւ ակտիվների, արխիվների ու փաստաթղթերի նկատմամբ, անկախ դրանց գտնվելու վայրից եւ տնօրինողից, ապահովել կոնվենցիայով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունը, ներառյալ՝ դատական ցանկացած միջամտությունից, խուզարկությունից, բռնագրավումից, սեփականագրկումից եւ ցանկացած այլ միջամտությունից զերծ պահելը, բացառությամբ որեւէ հատուկ դեպքի, երբ նրանք հստակորեն հրաժարվում են այդ անձեռնմխելիությունից,

- մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաներին ու նրանց ընտանիքների անդամներին օժտել նույնալիքի արտոնություններով ու անձեռնմխելիությամբ, ինչպեսիք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներին կամ ՍԱԿ-ի պաշտոնյաներին ու նրանց ընտանիքների անդամներին,

- մասնագիտացված գործակալությունների անդամների ներկայացուցիչներին (պատվիրակությունների անդամներին, նրանց փոխարինողներին, խորհրդատուններին, տեխնիկական փորձագետներին ու քարտուղարներին) եւ նրանց ամուսիններին ու խնամակալության տակ գտնվող անձանց օժտել կոնվենցիայով նախատեսված արտոնություններով ու անձեռնմխելիությամբ, ներառյալ՝ դատական ցանկացած միջամտությունից զերծ պահելը,

- մասնագիտացված գործակալությունները, նրանց ակտիվները, եկամուտը եւ այլ սեփականություննը, ինչպես նաև դրանց պաշտոնյաներին, անդամների ներկայացուցիչներին ու ընտանիքների անդամներին ազատել բոլոր տեսակի ուղղակի հարկումներից կամ մաքսային տուրքերից, ներմուծման եւ արտահանման արգելքներից եւ սահմանափակումներից, մասնագիտացված գործակալությունների կողմից վճարվող աշխատավարձն ու վարձատրությունն՝ հարկերից նույն պայմաններով, որոնցից օգտվում են ՍԱԿ-ի պաշտոնյաները, ապահովել նրանց գույքի, ունեցվածքի եւ այլ սեփականության անձեռնմխելիությունը,

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Երաշխավորել մասնագիտացված գործակալությունների պաշտոնյաների իրավունքը՝ օգտագործելու ՄԱԿ-ի անցագրերը՝ որպես ուղետրական վավեր փաստաթուղթ, նրանց տրամադրել ուղետրության համար նախատեսված նույն պայմանները, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցությունների անդամներին,

- մասնագիտացված գործակալություններին իրենց պաշտոնական հաղորդակցությունների համար ՀՀ տարածքում տրամադրել ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարությունը տրամադրում է ցանկացած այլ պետության կառավարությանը, ներառյալ՝ վերջինիս դիվանագիտական ներկայացուցություններին,

- մասնագիտացված գործակալությունների պաշտոնական գրությունները եւ այլ հաղորդակցությունները չենթարկել գրաքննության եւ այլն:

5. Կոնվենցիայով նախատեսվում է արտոնությունների չարաշահման եւ սույն կոնվենցիայի մեկնարաննան կամ կիրառման հետ կապված տարածայնությունների դեպքում Մասնակից պետության եւ համապատասխան մասնագիտացված գործակալության միջեւ խորհրդակցությունների անցկացում կամ վեճերի կարգավորում՝ Արդարադատության միջազգային դատարան դիմելու միջոցով:

6. Կոնվենցիայում նախատեսված են եզրափակիչ դրույթներ՝ Մասնակից պետության համար կոնվենցիայի կամ դրա հավելվածների ուժի մեջ մտնելու, կոնվենցիայի վերանայման վերաբերյալ:

7. Մահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա կոնվենցիայի մի շարք դրույթներ արդեն իսկ պարտադիր իրավաբանական ուժ են ձեռք բերել Հայաստանի Հանրապետության համար այն փաստի ուժով, որ ՀՀ մասնակցությամբ մի շարք այլ միջազգային պայմանագրերում, մասնավորապես՝ «Աղետի մեղմացման եւ օգնության ցուցաբերման նպատակով հեռահաղորդակցական ռեսուրսների տրամադրման մասին» Տամագերեի 1998 թվականի հունիսի 18-ի կոնվենցիայով, ՀՀ կառավարության եւ ՄԱԿ-ի գարգացման ծրագրի միջեւ 2005 թվականի փետրվարի 24-ին ստորագրված՝ «2005-2009թթ. համագործակցության ծրագրի գործողությունների պլանով» Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կոնվենցիայով նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունների գործողությունը տարածել որոշակի իրավահարաբերությունների վրա:

ՀՀ կառավարության եւ ՄԱԿ-ի գարգացման ծրագրի միջեւ 2005 թվականի փետրվարի 24-ին ստորագրված՝ «2005-2009թթ. համագործակցության ծրագրի գործողությունների պլանի» համաձայն, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է կիրառել քննության

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

առարկա կոնվենցիայի դրույթները ՍԱԿ-ի Զարգացման ծրագրի սեփականության, միջոցների եւ գույքի, ինչպես նաև պաշտոնյաների եւ խորհրդատունների նկատմամբ՝ չանդրադառնալով վերջիններիս քաղաքացիության հիմնահարցին: Այս առումով, ՀՀ կողմից քննության առարկա կոնվենցիայի հոդված VI-ի բաժին 20-ի նկատմամբ նման վերապահում կատարելու նոտարությունը սահմանադրադրավական տեսանկյունից առավել քան հիմնավորված է եւ բույլ է տալիս ապագայում խուսափել հնարավոր հակասահմանադրական իրավիճակների առաջացումից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը նպատակահարմար է համարում արձանագրել, որ ՀՀ մասնակցությամբ վերը հիշատակված միջազգային պայմանագրերի վավերացմամբ քննության առարկա կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների ծավալն ավելի լայն է, քան բուն կոնվենցիայով (կից վերապահմամբ) ստանձնելիք պարտավորությունների ծավալը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1947 թվականի նոյեմբերի 21-ին Նյու Յորքում ստորագրված՝ Սահմանադրավագանի գործակալությունների արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայում (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

### ՆԱԽԱԳԱՀՈՂ

### Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-915



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔՈՒՎԵՅԹԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԳԱՐՁ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.**

**Քաղ. Երեւան**

**18 սեպտեմբերի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դրսքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 25-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ ներդրումների խրախուման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 27.08.2010թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Մ. Թումասյանի գրավոր բացատրությունը, հե-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տազութելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջև ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) ՀՀ-ի կողմից ստորագրվել է 2010 թվականի հունիսի 25-ին՝ Երեւանում:

2. Նշված համաձայնագրի նպատակն է բարենպաստ պայմաններ ստեղծել Կողմների միջև տնտեսական համագործակցության զարգացման եւ, մասնավորապես, մի Պայմանավորվող կողմից տարածքում մյուս Պայմանավորվող կողմից ներդրողների կողմից ներդրումների իրականացման համար:

Համաձայնագրով կիրառվում է Քուվեյթի կողմից եւ հայկական կողմից բոլոր ներդրումների նկատմամբ, որոնք գոյություն ունեն կամ կկատարվեն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահին կամ դրանից հետո (հոդված 12):

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

· խրախուսել ներդրումները եւ ՀՀ տարածքում ստեղծել բարենպաստ պայմաններ Քուվեյթի կողմից ներդրողների կողմից ներդրումներ կատարելու համար եւ ընդունել այդ ներդրումները ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքների համաձայն (հոդված 2, կետ 1),

· ՀՀ տարածքում Քուվեյթի կողմից ներդրողների նկատմամբ ցանկացած ժամանակ ապահովել արդար եւ հավասար վերաբերմունք, ինչպես նաև լիակատար պաշտպանություն եւ ապահովություն՝ համաձայն միջազգային իրավունքի ընդունած սկզբունքների եւ համաձայնագրի դրույթների (հոդված 2, կետ 2),

· անհիմն կամ խտրական միջոցներով չխոչընդոտել Քուվեյթի կողմից ներդրողների ներդրումների կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, իրականացմանը կամ տնօրինմանը, ինչպես նաև կատարել Քուվեյթի կողմից ներդրողների ներդրումների հանդեպ ստանձնած ՀՀ բոլոր պարտավորությունները եւ հանձնառությունները (հոդված 2, կետ 2),

· ՀՀ տարածքում Քուվեյթի կողմին տրամադրել ներդրումների օգտագործման, կառավարման, վարման, շահագործման, ընդլայնման, վաճառքի կամ այլ կերպ տնօրինման նկատմամբ այնպիսի ռեժիմ, որը կլինի ոչ պակաս բարենպաստ, քան այն ռեժիմն է, որը նման իրավիճակներում ՀՀ-ն արանադրում է իր կամ ցանկացած երրորդ երկրի ներդրողների ներդրումներին՝ ընտրելով այդ ներդրումների համար ամենաբարենպաստ ռեժիմը (հոդված 3, կետ 1),

· ՀՀ տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, պետական արտակարգ իրավիճակների, հեղափոխության, քաղաքացիական խռովությունների, ապստամբության կամ նման այլ իրադարձություն-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Աերի պատճառով Քուվեյթի կողմի վնասներ կրելու դեպքում կորուստների վերադարձման, փախհատուցման, վնասի հատուցման կամ նման որեւէ այլ կարգավորման մասով ներդրողին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը ՀՀ-ն տրամադրում է իր ներդրողներին կամ որեւէ երրորդ կողմի ներդրողներին՝ ընտրելով ներդրողի համար ամենաբարենպաստ ռեժիմը (բացառությամբ համաձայնագրի 6-րդ հոդվածի կիրառման դեպքերի) (հոդված 4, կետ 1),

· ապահովել, որպեսզի Քուվեյթի կողմի ներդրողների կատարած ներդրումները ՀՀ տարածքում չազգայնացվեն, չսեփականազրկվեն, չօտարվեն կամ բռնազավթվեն կամ էլ ենթարկվեն ազգայնացմանը, սեփականազրկմանը, օտարմանը կամ բռնազավթմանը համարժեք՝ ուղղակի կամ անուղղակի գործողությունների, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է հանրային նպատակներով՝ ելնելով ՀՀ-ի ներքին կարիքներից՝ արագ, պատշաճ եւ արդյունավետ փոխհատուցման դիմաց եւ պայմանով, որ այդ միջոցառումներն իրականացվում են անխտրականության հիման վրա եւ ընդհանուր կիրառության համապատասխան օրինական գործընթացների համաձայն (հոդված 5, կետ 1, ենթակետ «ա»),

· ապահովել, որպեսզի վերոնշյալ փոխհատուցումը համարժեք լինի սեփականազրկված կամ օտարված ներդրումների փաստացի արժեքին եւ սահմանվի ու հաշվարկվի գնահատման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխան՝ օտարման իրականացման պահից անմիջապես առաջ կամ դրա հանրորեն հայտնի դառնալուց առաջ սեփականազրկված կամ օտարված ներդրումների արդար շուկայական արժեքի հիման վրա՝ կախված նրանից, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել: Այդ փոխհատուցումը հաշվարկել ներդրողի կողմից ընտրված ազատ փոխարկելի արժույթով՝ գնահատման օրը այդ արժույթի փոխանակման համար գործող գերակայող շուկայական փոխարժեքի հիման վրա, եւ ներառել օտարման իրականացման պահից մինչեւ վճարման օրն ընկած ժամանակահատվածի համար շուկայում ձեւավորված առեւտրային տոկոսադրույթը, որը ամեն դեպքում չպետք է պակաս լինի, քան գերակայող ԼԻԲՈՐ-ի գործող տոկոսադրույթը կամ համարժեքը (հոդված 5, կետ 1, ենթակետ «բ»),

· երաշխավորել Քուվեյթի կողմի ներդրողներին ներդրումների եւ դրանց հետ կապված բոլոր վճարումների ազատ փոխանցումները դեպի ՀՀ տարածք եւ դրանից դուրս, եւ այդ փոխանցումներն իրականացնել առանց անհիմն ուշացումների կամ սահմանափակումների եւ, բացառությամբ բնեղենով վճարումների, ազատ փոխարկելի արժույթով (հոդված 6, կետ 1, 2),

· Քուվեյթի կողմի կամ նրա նշանակած գործակալության կողմից ՀՀ տարածքում կատարված ներդրումների առնչությամբ ստանձնած փոխհատուցման կամ երաշխավորման դիմաց վճարում կատարելու դեպքում ճանաչել փոխհատուցող կողմին՝ այդ ներդրումից բխող բոլոր իրավունք-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»

ների եւ պահանջների փոխանցումը՝ օրենքով կամ այլ իրավական գործառությամբ, ինչպես նաև փոխատուցող կողմի իրավունքը՝ իրականացնել բոլոր այդ իրավունքները եւ կիրառել այդպիսի պահանջները եւ ստանձնել ներդրումների հետ կապված բոլոր պարտավորությունները սուբրոգացիայի իրավունքով (հոդված 7, կետ 1),

· փոխատուցող կողմին բոլոր հանգանանքներում տրամադրել այն ռեժիմը, որը տրամադրվում է՝ համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված փոխանցման իրավունքով ճեռք բերված իրավունքների ու պահանջների եւ ստանձնած պարտավորությունների նկատմամբ, ցանկացած վճարման նկատմամբ, որն ստացվել է՝ համաձայն այդ իրավունքների եւ պահանջների, որն սկզբնապես ներդրողը լիազորված էր ստանալ, համաձայնագրին համապատասխան, տվյալ ներդրման նկատմամբ (հոդված 7, կետ 2),

· Կողմների միջեւ ծագած վեճերը՝ կապված ներդրումների հետ, հնարավորության սահմաններում կարգավորել բարեկամաբար (հոդված 8, կետ 1),

· եթե նման վեճերը հնարավոր չեն կարգավորել վեճը բարեկամաբար լուծելու վերաբերյալ Քուվեյթի կողմին գրավոր ծանուցում ուղարկելու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա վեճը կարող է կարգավորվել հետեւյալ եղանակներից մեկով՝

ա) վեճերի կարգավորման կիրառելի, նախապես համաձայնեցված ընթացակարգերին համապատասխան,

բ) միջազգային միջնորդ դատարանի միջոցով (հոդված 8, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի հունիսի 25-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Քուվեյթի Պետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրավարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**18 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍԴԱ- 916**

«ՍԱՀՄԱՆԱՎՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

օբօջուղէ

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

ՀԱՅԴԱՔԱՑԻԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքԻ 1217-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

## ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

18 սեպտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոնյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ս. Հարությունյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայագործ՝ ՀՀ ԱԺ նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ օրենսդրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19, 25, 38 և 69-ող հոդվածների,

Գործի քննության առիթը քաղ. Ս. Հարույտյանի՝ 23.02.2010թ. ՀՀ պահմանառողական դատարան նույրագոված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, որպես փորձագետ ներգրավված՝ իրավագիտության դռկտոր, այրոֆեսոր S. Բարսեղյանի փորձագիտական եզրակացությունը, հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի վիճարկվող հոդվածը՝ «Երկրորդ հերթի ժառանգմեր» վերտառությամբ, սահմանում է.

«Երկրորդ հերթի ժառանգմերն են ժառանգատուի հարազատ եղբայրները եւ քույրերը: Ժառանգատուի եղբայրների եւ քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալն: Դիմողը հանդիսանում է ժառանգատու Ա. Սողոմոնյանի չորրորդ հերթի ժառանգ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժառանգատուն առաջին հերթի ժառանգմեր չունի՝ Երեսանի Կենտրոն նոտարական գրասենյակը որպես ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգ է ճանաչել նրա համամայր քրոջը: Դիմող Ա. Հարությունյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ նոտարական գրասենյակի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագրերի առողջին լինելը ճանաչելու եւ ժառանգության իրավունքի վկայագրեր տալուն պարտավորեցնելու վերաբերյալ հայցապահանջներով՝ այն հիմնավորմամբ, որ ժառանգատուի համամայր քույրը չի կարող հանդիս գալ որպես երկրորդ հերթի ժառանգ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի իմաստով: ՀՀ վարչական դատարանն իր՝ 23.04.2009թ. վճռով հայցը մերժել է: Վարչական դատարանն իր վճռի պատճառաբանական մասում վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. նախադեպային նշանակության որոշման մեջ առկա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածի մեկնաբանությունը, ըստ որի՝ այդ նորմով սահմանված՝ երկրորդ հերթի ժառանգմերի մեջ մտնում են նաև ոչ հարազատ (համամայր եւ համահայր) եղբայրներն ու քույրերը:

3. Դիմողը, որպես օրենսգրքի վիճարկվող՝ 1217-րդ հոդվածի հակասահմանադրականության հիմնական փաստարկ, մատնանշում է այդ նորմի անհամապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին: Դիմողը գտնում է՝ սահմանելով միայն, որ «Երկրորդ հերթի ժառանգմերն են ժառանգատուի հարազատ եղբայրները եւ քույրերը»՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածով սահմանված դրույթը չի հստակեցնում նշված հարաբերությունների կիրառելիության սահմանները եւ իր ոչ բավարար ճշգրտության պատճառով իրավակիրառողին հնարավորություն չի ընձեռում առաջնորդվել այդ նորմի կիրառելիության իրավաչափության միանշանակ եւ անվիճելի շափանիշներով, ինչն էլ հիմք է ծառայել, որպեսզի դատարանը նորմի բովանդակությունը բացահայտելու հա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մար հղում կատարի մեկ այլ իրավական ակտի՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքին՝ գույքային հարաբերությունները մեկնարանելով ամուսնալուսական հարաբերությունների սկզբունքների եւ անձանց ազգակցական կապի ընկալման տեսանկյունից: Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթի անորոշությունը թույլ է տվել ՀՀ վճռաբեկ դատարանին տալ նշված նորմի այնպիսի մեկնարանություն, որը հանգեցրել է իր՝ ժառանգություն ստանալու իրավունքի, հետեւարար՝ նաև ՀՀ Սահմանադրության 8 եւ 31-րդ հոդվածներով սահմանված սեփականության իրավունքի խախտմանը:

4. Պատասխանողը գտնում է, որ ըստ օրենքի ժառանգների հերթականությունը, ինչպես նաև կոնկրետ հերթի ժառանգների սահմանումը (այդ թվում ժառանգների շրջանակի ավելացումը կամ սահմանափակումը) որեւէ պարագայում չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածով նախատեսված սեփականության կամ 31-րդ հոդվածով երաշխավորված՝ իր սեփականությունը կտակելու իրավունքի խախտում, քանի որ օրենսդրությամբ երաշխավորված է կենդանության օրոք կտակի միջնորդով իր սեփականության ճակատագիրը որոշելու քաղաքացու իրավունքը: Ներկայացված դիմումում դիմողն ըստ Էության վիճարկվող դրույթի հակասահմանադրականության որեւէ հիմնավորում չի ներկայացրել: Դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ Էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության եւ կիրառման արդյունքում ընդունված դատական ակտերի օրինականության հարց: Դիմողն ըստ Էության ներկայացրել է վիճարկվող իրավադրույթի սեփական, կամայական, պաշտոնական (դատական) մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, չի ներկայացրել ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներին դրա հակասության որեւէ հիմնավորում:

Պատասխանողը նաեւ եզրակացնում է, որ եղբայրների ու քոյրերի հարազատ կամ համահայր կամ համամայր լինելը ժառանգական իրավահարաբերություններում իրավաբանական նշանակություն չպետք է ունենա:

Պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովն իր բացաւրություններում սահմանադրական դատարանին տեղեկացրել է նաեւ, որ Ազգային ժողովում շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ Երկրորդ հերթի ժառանգներ են նախատեսվում ճանաչել «...ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները եւ քույրերը»:

5. Սահմանադրական դատարանի 22.06.2010թ. ՍԴԱՆ-69 աշխատակարգային որոշմամբ որպես փորձագետ ներգրավված՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ,

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՒԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ի.գ.դ., պրոֆեսոր Տարիել Բարսեղյանի ներկայացրած փորձագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը չի բխում ժառանգման իրավունքի էությունից եւ դոկտրինայում ընդունված մոտեցումներից, ինչպես նաև հաշվի չի առնում հայ ժառանգման իրավունքի պատմությունը։ Փորձագետը եզրահանգում է, որ համար եւ համահայր քույրերին ու եղբայրներին ըստ օրենքի ժառանգման իրավունքի բացառելիս միեւնույն կատեգորիային պատկանող անձանց իրավունքների նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում։

6. ՀՀ սահմանադրական դատարանը կարեւոր է համարում վեճի առարկա օրինադրության սահմանադրականության հարցի լուծման շրջանակներում պարզել «հարազատ քույր եւ եղբայր» եւ «ոչ հարազատ (համահայր կամ համամայր) քույր եւ եղբայր» եզրույթների սահմանադրական ընդհանրություններն ու տարբերությունները։

ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ ազգակցական հարաբերությունների համատեքսուում այդ հասկացությունները ներառվում են միեւնույն խմբում եւ դիտարկվում են որպես մերձավոր հարազատներ։ Օրինակ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի թ) կետով սահմանվում է, որ արգելվում է ամուսնություն կնքել «մերձավոր ազգականների» (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու քոռների, ինչպես նաև հարազատ եւ համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր եւ մորեղբոր զավակների) միջեւ։

Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 39 եւ 40-րդ կետերում տրվում են հասկացութային հետեւյալ կոնկրետ ձեւակերպումները։ «39) **ազգականներ՝** ազգակցական կապի մեջ գտնվող եւ մինչեւ նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք։

40) **մերձավոր ազգականներ՝** ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ եւ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները եւ քույրերը, պապը, տատը, քոռները, ինչպես նաև ամուսինը եւ ամուսնու ծնողները, վերջիններին համար՝ փեսան եւ հարսը։

ՀՀ օրենսդրության համալիր ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ գործող տարբեր իրավական ակտերում տեղ են գտել հետեւյալ երեք տարբեր հասկացությունները։ «**քույրեր եւ եղբայրներ», «հարազատ քույրեր եւ եղբայրներ» եւ «ոչ հարազատ (համամայր կամ համահայր) քույրեր եւ եղբայրներ»։**

Այսպես, «**քույրեր եւ եղբայրներ**» ընդհանրական հասկացությունը (որն ըստ էության ներառում է ինչպես հարազատ, այնպես էլ ոչ հարազատ (համամայր կամ համահայր) քույրերին եւ եղբայրներին։ տեղ է գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 1219), «Քաղաքացիական ծառա-

## «ԱՎՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յության մասին» (հոդվ. 24), «Օտարերկրացիների մասին» (հոդվածներ 8, 15), «Քաղաքացիական կացության ակտերի մասին» (հոդվ. 74.1), «Հայաստանի փրկարար ծառայության մասին» (հոդվածներ 39, 94), «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» (հոդվ. 16), «Զինապարտության մասին» (հոդվ. 11), «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» (հոդվ. 24) եւ ՀՀ այլ օրենքներում:

**«Հարազար բույրեր եւ եղբայրներ»** հասկացությունը տեղ է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվ. 6), ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդվ. 1217), ՀՀ ընտանեկան օրենսգրքում (հոդվ. 11), «Մարդուն օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ փոխսպատվաստելու մասին» (հոդվ. 7), «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն շահագության մասին» (հոդվ. 2), «Քաղաքացիական կացության ակտերի մասին» (հոդվ. 6), «Փախստականների եւ ապաստանի մասին» (հոդվ. 7), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (հոդվածներ 16, 51), «Զինապարտության մասին» (հոդվ. 12) եւ ՀՀ այլ օրենքներում:

**«Ոչ հարազար (համամայր կամ համահայր) բույրեր եւ եղբայրներ»** հասկացությունը տեղ է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (հոդվ. 6), ՀՀ ընտանեկան օրենսգրքում (հոդվ. 11), ինչպես նաև «ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» (կետ 38), «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» (կետ 58) ՀՀ կառավարության որոշումներում:

Ընդ որում, հիշյալ իրավական ակտերի մեջ մասում կիրառվում են նշված հասկացություններից առնվազն երկուսը: Օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում կիրառվում է «հարազար» եւ «ոչ հարազար (համամայր կամ համահայր) եղբայրները եւ քույրերը» հասկացությունները: Նույնը վերաբերում է նաև ՀՀ վարչական եւ վճռաբեկ դատարանների կողմից մատնանշված ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածին: Կամ՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 74.1-րդ հոդվածում կիրառվում է «եղբայրներ եւ քույրեր» ընդհանրական հասկացությունը, իսկ 6-րդ հոդվածում՝ «հարազար եղբայր եւ քույր» հասկացությունը:

Նույնը կարելի է արձանագրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ըստ օրենքի ժառանգության ինստիտուտը կարգավորող՝ վիճարկվող 1217-րդ հոդվածի եւ 1219-րդ հոդվածի առնչությամբ: Այս դեպքում օրենսդիրը երկրորդ հերթի ժառանգներին սահմանելիս օգտագործում է «հարազար եղբայրները եւ քույրերը» հասկացությունը, իսկ չորրորդ հերթի ժառանգներին՝ «եղբայրները եւ քույրերը» հասկացությունը:

Գործող օրենսդրության վերլուծությունը վկայում է նաև, որ այն իրա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վահարաբերություններում, որում կարեւորվում է գենետիկական ներդաշնակության առաջնայնությունը՝ օրենսդիրը տարանջատել է հարազատ եղբայրներ ու քույրեր եւ համահայր կամ համամայր եղբայրներ ու քույրեր հասկացությունները՝ դրանց հավասար իրավունքների ու պարտականությունների շեշտադրման նկատառումներով, իսկ ժառանգական իրավահարաբերություններում ընդհանրապես առանձին անդրադարձ չի եղել համահայր կամ համամայր եղբայրներին ու քույրերին:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ըստ օրենքի ժառանգության ինստիտուտին առնչվող տարրեր դեպքերի համար օրենսդիրն օգտագործում է տարրեր հասկացություններ. մի դեպքում՝ «հարազատ եղբայրներ եւ քույրեր» հասկացությունը, մյուս դեպքում՝ «եղբայրներ եւ քույրեր» հասկացությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 1217-րդ հոդվածում օրենսդիրը նկատի է ունեցել բացառապես հարազատ քույրերին եւ եղբայրներին: Ըստ որում, այդպիսի տարանջատումն սկզբունքորեն վերապահված է օրենսդիրի հայեցողությանը, եթե այն իրականացվում է բավարար առարկայական հիմնավորվածությամբ եւ հետեւողականությամբ՝ հիմնվելով համակարգային ընդհանուր սկզբունքների վրա:

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ժառանգության ինստիտուտի սահմանադրամիրավական բովանդակության բացահայտմանը, ինչպես նաև այն հարցի պարզաբանմանը, թե օրենսդիրի կողմից հարազատ եւ համահայր կամ համամայր քույրերի եւ եղբայրների միջեւ տարանջատում կատարելու հայեցողությունն արդյո՞ք իրականացվել է բավարար առարկայական հիմնավորվածությամբ եւ հետեւողականությամբ՝ հիմնվելով համակարգային ընդհանուր սկզբունքների վրա:

Այս նապատակով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանը քննության առարկա հարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում կարող է արտահայտել վիճարկվող նորմը դրա հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի՝ տարրեր հերթի ժառանգների շրջանակը որոշող դրույթների հետ համարության մեջ դիտարկելով միայն:

Ժառանգության բովանդակությունը եւ, հետեւաբար, ժառանգման իրավունքը սահմանված են օրենսգրքի 1184-րդ հոդվածով: Ըստ այդ հոդվածի 1-ին կետի՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, **անցնում է այլ անձանց** (համապարփակ իրավահաջորդություն):

Ժառանգման իրավունքն ուղղակիորեն ամրագրված էր նաև ՀՀ Սահմանադրության նախորդ խմբագրությամբ տերասի 28-րդ հոդվածում: Միենույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասը

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սահմանում է, որ՝ «Սահմանադրությամբ ամրագրված մարդու եւ քաղաքացու իիմնական իրավունքները եւ ազատությունները չեն բացառում օրենքներով եւ միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ եւ ազատություններ»: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պետությունը ճանաչում է նաև ժառանգման իրավունքը, որը ներառում է ոչ միայն ժառանգություն տալու, այլ նաև ժառանգություն ստանալու իրավունքները:

Ժառանգական իրավունքն ապահովում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը նաև նրա մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավագորությունների հաջորդայնությունը: Միեւնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրուեն պաշտպանված հնարավորություն: Ժառանգական սուրյեկտիվ իրավունքը, այսպիսով, պաշտպանում է թե ժառանգություն տալու, թե ժառանգություն ընդունելու (ստանալու) իրավունքները: Ըստ օրենքի՝ ժառանգումը հիմնված է այն ներադրության վրա, որ ժառանգորդների շրջանակը, դրանց ժառանգության իրավիրելու հերթերը, ժառանգական գույքի չափը սահմանող օրենքը **համապատասխանում են ժառանգատուի կամքին**, որը չի ցանկացել կամ չի կարողացել արտահայտել իր կամքը այլ կերպ, օրինակ՝ կտակի միջոցով:

Սեփականությունն ըստ օրենքի ժառանգություն ընդունելու իրավունքը խարսխվում է, որպես կամուն, ժառանգատուի եւ ժառանգի միջեւ ազգակցական կապի կանխավարկածի վրա, չնայած որ ժառանգատուն ազատ է իր գույքը կտակելու ցանկացած անձի, այլ ոչ միայն իր ազգականներին: Սակայն ժառանգական իրավունքի գործառույթը կայանում է նաև նրանում, որ ապահովվի ժառանգատուի ընտանիքի անդամների տնտեսական զարգացման հնարավորությունը՝ առնվազն գոնե նրա հետ առավել սերտորեն փոխկապակցված ազգականների հարադրությամբ: Այս իմաստով ժառանգատուի ընտանիքը կազմում են ոչ միայն այն անձինք, որոնց նա իր կենդանության ժամանակ տրամադրել է ապրուստի միջոցներ, **այլեւ այն տնտեսական միավորումը, որն ունեցել է եւ ունի ժառանգական գույքով պայմանավորված տնտեսական եւ սոցիալական համատեղ շահեր**: Դրանով է կանխորոշվում ժառանգության ինստիտուտի բովանդակությունը:

Ժառանգատուի եւ ժառանգների միջեւ ազգակցական հարաբերություններում, իր հերթին, առաջանում է գենետիկ գործոններով պայմանավորված աստիճանակարգություն, որը ներադրում է ժառանգման հարցում ժառանգատուի ուղղակի ժառանգների նախապատվությունն այլ ժառանգների համեմատ: Որքան ավելի մերձ է ժառանգատուի եւ ժառանգի ազգակցական կապը, այնքան ավելի մեծ է ըստ օրենքի ժառանգման առաջնահերթությունը տվյալ ժառանգի համար:

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8. Օրենսգրքի վիճարկվող՝ 1217-րդ հոդվածով ժառանգատուի երկրորդ հերթի ժառանգներ են համարվում ժառանգատուի հարազատ քոյրերը եւ եղբայրները: Այսինքն՝ օրենսդիրը երկրորդ հերթի ժառանգների թվին է դասում երկրորդ աստիճանի կողային ազգականներին: Ընդ որում, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կողային ազգակցություն է համարվում ընդհանուր նախնիից անձանց սերված լինելու արյունակցական կապը: Այս տեսակետից եւ՝ հարազատ, եւ՝ համահայր կամ համամայր քոյրերն ու եղբայրները ժառանգատուի հանդեպ կարող են դիտվել միեւնույն՝ երկրորդ աստիճանի ազգակցական կապի մեջ, **հետեւաբար՝ նաև միեւնույն կատեգորիայի մեջ**, քանի որ նրանք ունեն ընդհանուր նախնի՝ հայր եւ/կամ մայր:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ ժառանգատուի համահայր կամ համամայր քոյրերը եւ եղբայրները ժառանգատուի հարազատ քոյրերի եւ եղբայրների համեմատությամբ ժառանգատուի նկատմամբ գտնվում են միայն մասնակի մերձավոր ազգակցական կապի մեջ, ինչը բույլ է տալիս արձանագրել, որ վերջիններս նույն կատեգորիայի շրջանակներում գտնվում են տարբեր ենթակատեգորիաների մեջ, ինչը, իր հերթին, համակարգային ընդհանուր սկզբունքների վրա հիմնված որոշակի առարկայական տարբերակման հիմք կարող է հանդիսանալ, եւ այդ առումով կարող է նաև ներգործել ժառանգման հերթականության վրա: Սակայն համամայր եւ համահայր քոյրերին եւ եղբայրներին ժառանգման հերթից ընդհանրապես դուրս թողնելը չի կարող բավարար չափով հիմնավորվել հիշյալ օբյեկտիվ տարբերությամբ, եւ անհրաժեշտ ու իրավաչափ չէ ժառանգման նպատակին հասնելու համար:

**Այս առումով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 72-րդ գլխում առկա է այնպիսի օրենսդրական բաց, որը չի կարող լրացվել այլ իրավական երաշխիքներով եւ որի պայմաններում չի ապահովվում անձի ժառանգման իրավունքի իրացման հնարավորությունը: Նման օրենսդրական բացը հանգեցնում է արյունակցական ավելի բույլ կապի պատկանող անձանց մի մասի իրավունքների արգելափակման, ինչը չի կարող օբյեկտիվորեն արդարացված նպատակ հետապնդել:**

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն իրավասու է հաշվի առնելով հարազատ եւ համահայր կամ համամայր քոյրերի եւ եղբայրների միջեւ առկա օբյեկտիվ տարբերությունը՝ համահայր կամ համամայր քոյրերին եւ եղբայրներին դասել մեկ այլ՝ հաջորդ հերթի ժառանգների թվին /ինչն ընդունված է մի շարք երկրների ժառանգական իրավունքում/: Սակայն օրենսդիրն իրավասու չէ այդ տարբերությունն օգտագործել համահայր կամ համամայր քոյրերին եւ եղբայրներին ժառանգությունից օրենքի ուժով ընդհանրապես բացառելու համար: Այդափ լայն սահմանափակումն օրենսգրքի՝ ըստ օրենքի ժառանգությանը վերաբերող գլխում բավարար չափով հիմնավորված չէ առարկայական չափանիշներով: Այն ժառանգություն ստանալու սահմա-

## «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրական իրավունքի **ոչ համաշափ** սահմանափակում է՝ Սահմանադրության 1-ին հոդվածից (իրավական պետության սկզբունքը) բխող համաշփության սկզբունքի եւ իրավահավասարության սկզբունքի (Սահմանադրության 14.1-րդ հոդվ.) տեսանկյունից:

9. Տարբեր երկրների (Ուսասատանի Դաշնություն, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա, Վրաստան, Մոլդովա եւ այլն) քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ ժառանգական իրավահարաբերություններում, որում իրավահաջորդության եւ անձի սեփականության իրավունքի հարցեր են շոշափվում, խտրականություն չի դրվում հարազատ եւ համահայր կամ համամայր քույրերի ու եղբայրների միջեւ կամ առնվազն համահայր կամ համամայր եղբայրներն ու քույրերը դուրս չեն քողնվում այդ իրավահարաբերություններից:

Հայ իրավունքում եւս, այդ թվում խորհրդային տարիների, ժառանգման իրավահարաբերություններում երբեւէ տարբերակում չի դրվել հարազատ եւ համահայր ու համամայր քույրերի ու եղբայրների միջեւ: Դատական պրակտիկան նույնպես ընթացել է այս ճանապարհով: Նույնիսկ այն քանից հետո, եթե 1999թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածով ամրագրվեց «հարազատ եղբայրները եւ քույրերը» արտահայտությունը, դատական պրակտիկան շարունակեց ընթանալ ավանդաբար ձեւավորված կարգով: Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 2010թ. հունիսի 6-ին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված տեղեկանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի եզրահանգումն այն է, որ «... ժառանգական իրավահարաբերություններում ժառանգատուի հարազատ եղբայրներին եւ քույրերին հավասարեցված են նաև ժառանգատուի հետ համահայր կամ համամայր քույրերը եւ եղբայրները»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշման մեջ հետեւողականություն չի դրսեւորել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների ապահովման առումով: Վերջինս, մասնավորապես, սահմանում է, որ «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

Մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ժառանգատուի համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի իրավունքների պաշտպանությունը տվյալ հարաբերություններում կարող է ապահովել միայն ժառանգման իրավունքի իրացման հնարավորության օրենսդրական երաշխավորմամբ, եւ նման դիրքորոշումը բխում է իրավունքի գերակայության ապահովման անհրաժեշտությունից:

## **«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19, 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլուխն այն մասով, որով բացառում է համամայր եւ համահայր քույրերի եւ եղբայրների՝ ժառանգատուի հետ իրենց ազգակցական փոխկապակցվածության աստիճանին համարժեք ժառանգման իրավունքը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածներին եւ 14.1-րդ հոդվածի երկրորդ մասին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**18 սեպտեմբերի 2010 թվականի  
ՍՊԸ-917**



## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ-15 Հոբելյանական օրերի խրոնիկա

**Փեղովարի 4-ին** ՀՀ սահմանադրական դատարանի 15-ամյակին նվիրված ընդունելությանը ներկա էին Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանը, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ՀՀ ոստիկանապետ Այլիկ Սարգսյանը, Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար, ղենապան Սերգեյ Կապինոսը, ՀՀ ԱԺ պատգամավորներ, դատարանների նախագահներ, իրավաբաններ:

ՄԴ շենքի հարկերում եւ նիստերի սրահում բացված էր «**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍ**» ցուցահանդեսը, որը ներկայացված էին ճանաչված նկարիչներ Գառզուի (Գառնիկ Զովումյան), Հակոբ Հակոբյանի եւ երիտասարդ ավանգարդիստների կտավներ: Նիստերի սրահում բացելով հանդիսությունը, Սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դրկտոր, արքֆեսոր Գագիկ Հարությունյանը հանդես եկավ հակիրճ խոսքով, կարեւորեց ՀՀ սահմանադրական դատարանի դերը՝ որպես երկրում սահմանադրական նոր մտածողության ձեւավորման ու զարգացման առաջամարտիկ, որը կյանքի կոչեց սահմանադրագիտության իրավափիլիստիկայական հայեցակարգային նոր մոտեցումներ, որեց սահմանադրական դատավարության հիմնաքարերը, մեծ ավանդ ունեցավ սահմանադրական արդարադատության գիտամեթոդաբանական հիմնախնդիրների լուծման գործում:

ՀՀ սահմանադրական դատարանի հետ ակտիվ գործակցության, երկրում իրավական մշակույթի զարգացման գործին բերած նպաստի համար եւ Սահմանադրական դատարանի 15-ամյակի կապակցությամբ ՄԴ ոսկե մեդալով պարգևատրվեցին՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ղեկան, ՀՀ իրավաբանների միության նախագահ Գ. Ղազինյանը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Ս. Կապինոսը, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռ. Սահակյանը, գերմանական միջազգային համագործակցության Իրավական համակարգի ամբապնդման համար խորհրդատվության հայաստանյան ընկերության ղեկավար Վարդան Պողոսյանը:

Սահմանադրական դատարանի կազմավորման 15-ամյակի կապակցությամբ եւ սահմանադրական դատարանի գործունեության կազմակերպման գործում ունեցած նպաստի համար ՄԴ ոսկե մեդալով պարգևատրվեց ՄԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընդունելության շրջանակներում կայացավ **Սահմանադրական դատարանի պեղեկագրի** հորելյանական համարի (ուր գետեղված է ՍԴ 2010թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան *հաղորդումը*) եւ «ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների եւ այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010թ.)» 995 էջանոց ժողովածուի շնորհանդեսը: Այս գրքում ներառված է ՀՀ սահմանադրական դատարանի հազար որոշումներից 99-ը: Դրանք վերաբերում են օրենքների եւ այլ իրավական ակտերի սահմանադրականությանը, որոնց ուսումնասիրությունը օգտակար կարող է լինել իրավաստեղծ գործունեության ընթացքում՝ որպես իրավունքի աղբյուր, ինչպես նաև իրավակիրառողների, իրավունքի հիմնահարցերն ուսումնասիրողների, գիտակրթական ոլորտում աշխատողների, ՀՀ սահմանադրական դատարան դիմող քաղաքացիների համար:

Հընթացս հանդիսության, մասնակիցները դիտեցին ցուցահանդեսը:



«Այս ցուցահանդեսների բացումը խորիրդանշական քննույթ ունի, - ասաց ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը, - ցանկացանք շեշտել որ մեր օրենքում ավելի մեծ ուշադրություն պետք է դարձվի սահմանադրության արժեքանությանը: Իրավական պետությունը, սահմանադրական ժողովրդավարությունը բնորոշ են այս երկրին, որպես կա որչակի սահմանադրական մշակույթ»: Պարոն Հարությունյանը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ու նպաստեցին ցուցահանդեսի բացմանը: Առաջին հերթին Հակոբ Հակոբյանին, ով շատ կարենորեց այս ցուցահանդեսը եւ սիրահոժար տրամադրեց իր կտավները: Տիկին Վիկի Շողակ Հովհաննիսյանին, ով ոչ միայն ԱՄՆ-ում ունեցած իր հավաքածուից ներկայացրեց Գառզուի կտավները, այլև աջակցեց «Սահմանադրություն եւ արվեստ» ալբոմը հրատարակելուն, որն այդ օրը բաժանվեց հանդիսության մասնակիցներին: Իր այդ նախանձախնդիր վերաբերմունքի համար պարոն Հարությունյանը տիկին Վիկի Շողակ Հովհաննիսյանին հանձնեց ՀՀ սահմանադրական դատարանի շնորհակալագիրը: Հովհիս էր տիկին Հովհաննիսյանի պատասխան խոսքը. «Հայրուկ շնորհակալություն այս անգույքական առիթի համար, որ ինչ վսկրակից սույն ցուցահանդեսը համադրելու եւ ներկայացնելու Սահմանադրական դատարանի 15-ամյակի առիթով: Գեղանկարչական աշխատանքներն իրենց բովանդակությամբ շաղկապում են սահմանադրություն եւ արվեստ զաղափարախոսությունը, քանի որ արվեստ եւ արհեստ սպեղծող ժողովրդի սահմանադրական

իրավունքը ժամանակակից հարցերի անդրադարձումն է մեր կյանքի մեջ, եւ այս ցուցահանդեսը արվեստագեղների եւ իրավաբեր քաղաքացու հոգնուր կապի վառ վկայությունն է»:

**Փելքրվարի 5-ին** ՍԴ 15-ամյակի տոնակատարությունների շրջանակում ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը հանրաճանաչ դաշնակահար Արքուր Փափազյանի հյուրընկալ հարկի տակ էր իրավիրել տոնակատարության մի շարք մասնակիցների: Մաեստրոյին ունկնդրելու էին եկել Հանրապետության Առաջին Տիկին



Ոխտա Սարգսյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավար Ս. Կապինոսը, ՍԴ անդամներ, դատարաններ նախագահներ, բարձրաստիճան այլ հյուրեր: Մաեստրոն մեկ ժամ հյուրերին պահեց Կոմիտասի, Ծոպենի զմայլելի երաժշտության միջավայրում:

**Փելքրվարի 7-ին** ՀՀ սահմանադրական դատարանի 15-ամյակի առիթով, Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, կառավարության ընդունելությունների տանը կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն:

Ընդունելությանը մասնակցում էին Վեհափառ Հայրապետը, ԱԺ նախագահ Հ. Աբրահամյանը, վարչապետ Տ. Սարգսյանը, սահմանադրական դատարանի անդամներ, նախարարներ, ԱԺ պատգամավորներ, ծառայությունների պետեր, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ:



## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծնորհակալություն հայտնելով մասնակցության համար, Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը համառոտ ներկայացրեց սահմանադրական արդարադատության կայացման գործընթացը: «Վարչական համարական դատարանը՝ անցած դարձնելիք դասերն ու ժամանակի մարդարավերները խորապես հաշվի առնելով, հետայսու նույնպես հաջողությամբ կիրականացնի իր բացառիկ կարենոր առաքելությունը»:

## ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆՈՒՄ

**Փետրվարի 19-ին** ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը հյուրընկալեց հեռուստահաղորդավարների և լրագրողների «TV ideal» մասնագիտացված դպրոց-ստուդիայի ավագ խմբերի սաներին: Սաներին ներկայացրեց դպրոց-ստուդիայի համահիմնադիր և ղեկավար, լրագրող Գայանե Փայտյանը՝ շեշտելով, թե որպես ապագա լրագրողներ, նրանք վաղուց էին փափագում այս հանդիպումը՝ լսելու ՍԴ նախագահի տեսակետները երկրի դատարական համակարգի, Սահմանադրության, գործող օրենքների, պետություն-հասարակություն փոխհարաբերությունների վերաբերյալ:



Մեր երկրի ներկա կացությունը, հաջողություններն ու առկա խնդիրները լուսաբանել պատրաստվող ապագա լրագրողները հետաքրքրությամբ լսեցին պարոն Հարությունյանի ուսանելի դասախոսությունը, որը հետո վերածվեց մտերմիկ զրոյցի: ՍԴ նախագահը պատասխանեց նաև սաների բազմաբնույթ հարցերին:

Պարոն Հարությունյանը ստուդիայի գործարանին նվիրեց ՍԴ 15-ամյակի կապակցությամբ վերջերս հրատարակված «Սահմանադրություն և արվեստ» գրքի օրինակներ:

## ՄԻՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՍՊ-ՈՒՄ

Միջազգային իրավական համագործակցության գերմանական իիմնադրամը (IRZ-Stiftung/ ՄԻՀ իիմնադրամ) նպատակ ունի Գերմանիայի Դաշնային կառավարության հանձնարարությամբ Հայաստանում աջակցություն ցուցաբերել իրավական համակարգի եւ արդարադատության ոլորտի բարեփոխումներին:

**Փետրվարի 24-ին** ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց հետազա ծրագրերի իրականացման նախապատրաստության նպատակով Հայաստանում գտնվող՝ ծրագրի պատասխանատու, տիկին Բրիտանա Շվարցին եւ պարոն Ֆալկ Բոմադրֆին:



Զրույցն ընթացավ Հայաստանում իրականացվող իրավական բարեփոխումների ոլորտում ՍԻՀ հիմնադրամի հետ հնարավոր համագործակցության վերաբերյալ:

Հյուրերն այսուհետեւ դիտեցին Սահմանադրական դատարանի շենքում ՍԴ-15-ամյակի կապակցությամբ բացված ցուցահանդեսը:

### ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԸ

**Մարտի 16-ին** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյին: Քննարկման առարկան Ո-Դ սահմանադրական դատարանի կազմավորման 20-ամյակին նվիրված միջոցառումներին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնական իրավերին առնչվող հարցերն էին: Դեսպանը կարեւորեց, որ տոնակատարությունների շրջանակներում Մոսկվայի Կրեմլի մեծ պալատում, Ո-Դ Նախագահի, բարձրաստիճան անձանց ու հանրային լայն մասնակցությամբ, կայանալու է հանդիսավոր նիստ, որին պաշտոնապես իրավիրվում է նաև ՀՀ ՍԴ նախագահը: Նոյն օրը երեկոյան նիստի մասնակիցները հատուկ ինքնաթիռով կմեկնեն Սանկտ-Պետերբուրգ, որ կոնգրեսների Պալատում կկայանա «Սահմանադրական վերահսկողություն ողկողինա եւ պրակտիկա» միջազգային երկօրյա գիտաժողով:

Դեսպանը հատուկ շեշտեց այն առանձնահատուկ վերաբերմունքը, որ Կրեմլում կայանալիք հանդիսավոր նիստին նախատեսված է ՀՀ ՍԴ նախագահի ողջույնի խոսքը, ինչպես նաև նրա գեկույցը Սանկտ-Պետերբուրգում կայանալիք միջազգային գիտաժողովում:

Պարոն Հարությունյանը շնորհակալությամբ ընդունեց իրավերը:



**ՍԴ մամուլի ծառայություն**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կողմանայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Քաղաքամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 04.04.2011 թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաշափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

ՀՀ ՍԴ պետեկազիրը ՀՀ  
բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
այդենախոսությունների արդյունքների  
դատագրման համար ընդունենի  
պարբերականների ցանկում

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(59) 2011  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(59) 2011  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Armenie. N 2(59) 2011